

Եթե Դուք էլ լսեիք այդ խոսքը, Դուք էլ գուցե խմբագրեիք: Իմ կրեդոն այն է, որ բոլորը կարող են գալ Ռադիո, բացի Դոգից: Ես միայն Դոգին եթեր չեմ տա, որովհետեւ նա պարզապես հայհոյում է, ուրիշ ոչինչ, իսկ մնացածները թող գան: Այ մարդ, եկեք, քլնգեք, փաստարկված խոսեք, բայց վիրավորական արտահայտություններ մի արեք:

Կարդացեք՝ էջ 4

Հասկացող խավի մեջ ձեւավորվել է թյուր կարծիք, թե խորհրդարանական կառավարումը վատ բան է, ու մեր դժբախտությունը կառավարման մոդելի մեջ է: Բայց մոդելը մեղք չունի: Այլ հարց է, թե ով է կառավարիչը: Նիկոլը դառնար ՀՀ նախագահ՝ ամեն ինչ ավելի վատ էր լինելու, քան հիմա, երբ նա վարչապետ է կամ «սուպերվարչապետ»:

Կարդացեք՝ էջ 5

Օրերս իմ փաստաթղթերի հավաքածուի մեջ պատահաբար աչքովս ընկավ «Հայկական ժամանակ» թերթում 2008 թ. տպագրված՝ «Հեղինակի անունը կարեւոր չէ» վերնագրով հոդվածը, որտեղ նկարագրվում է Կճոյան Նավասարդ արքեպիսկոպոսի «քաջագործություններից» մեկը՝ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի «կնքահայրությամբ» իրականացված:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 210 (4111), 23 դեկտեմբեր, երեքշաբթի, 2025

www.hraparak.am



Դեկտեմբերի 28-ին Մայր Աթոռում պատարագի մասնակցելու մասին ՔՊ-ից երեկ վստահեցրին, որ իրենց պաշտոնապես չեն հայտնել այդ մասին: Փաշինյանի խոսնակը հայտարարեց, որ առաջիկա պատարագի եկեղեցին դեռ հայտնի չէ: Ըստ լուրերի՝ Փաշինյանը որոշել է ամեն գնով լուծել եկեղեցու եւ Վեհափառի հարցերը, տիրադավ եպիսկոպոսների, իր խաժամուժի հետ մտնել մայր տաճար, իսկ մինչ այդ ուժայինների միջոցով եկեղեցին «մաքրազարդել» հոգեւորականներից, եթե պետք է՝ Վեհափառի այլ մտերիմների էլ կալանավորել, որ նա ծնկի գա: Որոշել է ամեն գնով մինչեւ ընտրությունները լուծել հարցը: Բացի նրանից, որ արտաքին ուժերն են պահանջում, նա նաեւ կարծում է, որ եթե հաջողվի իրագործել իր պլանը, ապա հանրային ապատիան կաճի, եւ այլեւս մեծ ջանքեր չեն պահանջվի ընտրություններում հաղթելու համար: Շարքային քաղաքացին կսկսի ատել ոչ միայն եկեղեցին ծնկի բերած Փաշինյանին, այլեւ անկարող ընդդիմությանը, որն ի զորու չեղավ կանխել այդ ամենը: Նախորդ շաբաթ նա ստուգողական թեստ էր իրականացնում 10 տիրադավների միջոցով, որ հասկանա ընդդիմության, վեհարանը պաշտպանողների ռեսուրսը, թե քանի հոգի է իր դեմ կանգնելու, եւ ինչ քանակի զորք է պետք ներգրավել՝ վեհարանը գրավելու համար:

Թրամփի վարչակազմը որոշել է հետ կանչել աշխարհի մոտ 30 երկրից իր դեսպաններին՝ նրանց, ովքեր չեն առաջնորդվում «Ամերիկան՝ առաջնահերթ» կարգախոսով: Հետ կանչվողների շարքում է նաեւ ՀՀ-ում դեսպան Քրիստինա Քվինը, որի հետկանչն անհանգստություն է առաջացրել ՀՀ իշխանական շրջանակներում: Չնայած դեսպանին մի քանի ամիս էր մնացել՝ նա նշանակվել է 2023-ի հուլիսին, 3 տարին կլրանար 26-ի ամռանը: Գաղտնիք չէ, որ Ուկրաինայից Հայաստան գործուղված ԱՄՆ դեսպանը ՀՀ իշխանությունների կուրատորն է, աչք է փակում բոլոր ապօրինությունների, քաղբանտարկյալների, եկեղեցու դեմ իշխանական գրոհների վրա: Մինչդեռ նախորդ ամիս Թրամփի որդին Հայաստան չեկավ հենց եկեղեցու դեմ հարձակումների պատճառով: Թաքեր Կարլսոնին Նարեկ Կարապետյանի հարցազրույցից Թրամփ կրտսերը եկեղեցու դեմ հարձակման մասին իմանալուց հետո որոշեց հրաժարվել Հայաստան այցից եւ գործող իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպումներից: Այնպես որ, ամերիկյան վարչակազմը, ի տարբերություն Քվինի, չէր կարող աչք փակել Հայ առաքելական եկեղեցու դեմ հարձակումների վրա: Դեսպանին մինչեւ ընտրությունները հետ կանչելը եւ նոր դեսպան գործուղելը, ըստ իշխանականների, պատահական չի արվում:

Մեղք մարդիկ

Անկեղծ կարեկցանքի են արժանի այն պետական կառույցները, որոնց Նիկոլ Փաշինյանը պարտադրում է շեղվել օրենքից, խախտել Սահմանադրությունը, որ կատարեն իր կամքը: Իհարկե, բոլոր այդ կառույցներում աշխատողները ելք ունեն՝ հրաժարական տալ եւ հրաժարվել ապօրինի հրահանգները կատարելուց: Բայց մեզանում հրաժարականի ինստիտուտը կայացած չէ, եւ հրաժարականները որպես պարտություն են դիտվում: Ու մնում է ատամները սեղմած ծառայելը՝ փորձելով կատարել վերադասի կամքը՝ օրենքը շրջանցելու բացատրություններ գտնելով: Օրինակ, եթե քիչ թե շատ իրավունքին ծառայող գլխավոր դատախազ ու Քննչական կոմիտեի ղեկավար ունենայինք, պետք է ինֆարկտ ստացած լինեին՝ Սամվել Կարապետյանի, Միքայել Աջապահյանի, Արշակ սրբազանի դեմ գործերը «կարելիս»: Կամ եթե առողջապահության, կրթության, արդարադատության նախարարները մի քիչ աստվածավախ լինեին, իրենց ներսում մոր, կնոջ տեսակն ուժեղ լիներ, ինչպես կարող էին այդ ապօրինի պատարագներին մասնակցել, կաթողիկոսին անունով դիմել, մասնակից դառնալ այս հերետիկոսական շարժմանը: Պատկերացնում եք, եթե ԱԱԾ ղեկավարը, պաշտպանության նախարարը, ԱԺ նախագահը գիտակցեին իրենց ղեկավարած կառույցների դերն ու առաքելությունը, ինչքա՞ն այլ կլիներ մեր երկիրը: Կամ՝ եթե Պետեկամուտների կոմիտեի նախագահը կարողանար ասել, որ չի կարող վարչապետի հրահանգով խանութ փակել եւ ոչ թե այդ ապօրինի հրամանը կատարելու համար «կռուտիտներ» փնտրեր, որոնք ծիծաղելի են հնչում եւ ավելի ակնհայտ դարձնում լիազորությունների գերազանցման փաստը, ինչքա՞ն բան կարող էր ուղղվել մեր երկրում: Իսկ եթե մենք նորմալ հայ նախագահ ունենայինք, որի համար կարեւորը ոչ թե նախագահական նստավայրում խրտվիլակի նման նստելը լիներ, այլ իր երկրի շահը, ինչքա՞ն ուրիշ Հայաստանում մենք կապրեինք:

Անցած շաբաթ ՔՊ վարչությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, վարչության 4 նիստ է անցկացրել՝ 2026 թ. նախընտրական ցուցակի թեկնածուներին գրանցել-չգրանցելու համար: Նիստերը տեւել են 4.5 ժամ, 5 ժամ, 6 ժամ, իսկ վերջինը՝ շաբաթ օրվանը, 8.5 ժամ: Կարելի է կարծել, թե երկրում ոչ մի խնդիր ու չլուծված հարց չկա, ուստի կառավարության ղեկավարն ու իր թիմը նվիրվել են կուսակցական աշխատանքին, ընդ որում՝ 6 ամիս անց կայանալիք ընտրությունների թեմայով: Ոչ մի պետության ղեկավար, որի երկրում այսքան խնդիրներ կան կուտակված, նման շռայլություն իրեն թույլ չէր տա: Իսկ պատկերացնո՞ւմ եք, թե ինչ է լինելու մեկ-երկու ամսից, երբ ընտրությունների շունչն իրեն զգացնել կտա:

ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ԿԲԱԺԱՆԵՆ

ՊՆ-ում տարեվերջյան պարգեւատրումները նոր մեթոդով են անելու: Կառավարությունն առաջին անգամ գործի է դրել պիլոտային ծրագիր, որի համաձայն՝ ՊՆ քաղաքական, հայեցողական եւ քաղծառայության պաշտոններ զբաղեցնողները պարգեւավճարներ կստանան 2025 թ. առաջին կիսամյակի համար սահմանված առաջնահերթությունների կատարողականի արդյունքներով: Ըստ այդմ՝ 4 մլն 800 հազարական դրամ կստանան նախարարի երեք տեղակալները: 2 մլն 600 հազարական դրամ՝ նախարարի երկու խորհրդականները, վարչությունների պետերը, մամուլի քարտուղարը, քարտուղարության պետը, ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի պետն ու եւս մի քանի հոգի: Միայն այս խմբի պարգեւավճարի ընդհանուր գումարը կկազմի 146 մլն 296 հազար դրամ: Նրանցից քիչ պակաս կստանան վարչության պետերի տեղակալներն ու բաժինների պետերը՝ մոտ 50 հոգի: Նրանք էլ կպարգեւատրվեն 1 մլն 200 հազարական դրամով: Ի տարբերություն վերնախավի՝ քաղծառայողները կպարգեւատրվեն 62-145 հազար դրամով: «Թուլափայ են տալիս, որ ձեններս դուրս չգա, բայց չեն հասկանում՝ սրանով ավելի են վիրավորում: Պահումներն էլ հանած՝ 50-90 հազար հազիվ ստանանք: Դրանց հաշվարկի մեջ ոչ մի տրամաբանություն չկա: Եթե այնքան փող կա, որ ավելցուկ է տվել՝ բաժանելով չի վերջանում, ուրեմն այնպես հաշվեիք, որ ռախիտի գլխի չնմանվեր՝ վերեւը՝ տոգած, ներքեւը՝ բարակ»,- դժգոհեց մեր աղբյուրը: Բացի պարգեւավճարը, նախարարության ծառայողները մեկ դրույքաչափ էլ 13-րդ աշխատավարձ կստանան՝ 600-700 հազար դրամ: «Խոպան են եկել, ոտը ոտներին գցած՝ միլիոններ են ստանում: Բանակի բերնից կտրում՝ իրենց գրպանն են լցնում: Թե ինչ է կատարվում սահմանին, ինչ վիճակում են դիրքերը, իրենց հետաքրքիր չէ»: Միլիոնների պարգեւավճարը ՊՆ-ում համարում են նախընտրական շրջանի օրինականացված ընտրակաշառք:

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

ՀԱՅՑ

Դիլիջանի համայնքապետարանը Երեւանի քաղաքացիական դատարան հայցադիմում է ներկայացրել՝ խնդրելով լուծել Դիլիջան համայնքի եւ Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում գրանցված «Դիլիջան Դեւելոփմենթ Քամփնի» ՓԲ ընկերության միջեւ 2018թ. սեպտեմբերի 7-ին կնքված քաղաք Դիլիջան, Գետափնյա 19/4 հասցեում գտնվող 4572.1

քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող 11-003-0305-0049 ծածկագրով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 8 պայմանագիրը եւ անվավեր ճանաչել վերը նշված հողամասի նկատմամբ «Դիլիջան Դեւելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ի իրավունքի պետական գրանցումը:

Իմ տեղեկություններով՝ «Դիլիջան Դեւելոփմենթ Քամփնի» ՓԲԸ սեփականատերը հայտնի գործարար Ռուբեն Վարդանյանն է, որը մեկուկես տարի է՝ գտնվում է Բաքվի բանտում: Վարդանյանի ընկերությանն է կառուցապատման իրավունքով պատկանում Դիլիջան քաղաքի կենտրոնում գտնվող արհեստական լճակի շրջակա տարածքը: Ռուբեն Վարդանյանն իր ընտանիքով միլիոնավոր դոլարների ներդրում է կատարել Դիլիջան քաղաքի զարգացման համար: Դիլիջանում նրա ընտանիքի կողմից հիմնադրված միջազգային դպրոցը Դիլիջանին հայտնի է դարձրել աշխարհով մեկ, այն բազում աշխատատեղեր է ստեղծել: Բարերար, գործարար Ռուբեն Վարդանյանը ներկայում Ադրբեջանում դատվում է, Բաքվի բարբարոս դատարանում նրան ցմահ ազատազրկում է սպառնում: Նրա նկատմամբ ադրբեջանական իշխանությունն առավել ընդգծված բացասական վերաբերմունք ունի, քան մյուս գերիների նկատմամբ: Ադրբեջանում նրա վերաբերյալ ֆիլմ են ցուցադրել, բնականաբար, խիստ բացասական ներկայացնելով Ռուբեն Վարդանյանին եւ նրա գործունեությունը:

Իսկ ՀՀ իշխանությունը, փոխանակ ամեն ինչ անի՝ հայ բարերարին եւ մեր մյուս գերիներին բերելու, ճիշտ հակառակը՝ անգամ նպաստում է նրանց նկատմամբ հալածանքներին: 2024թ. օգոստոսի 31-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը մամուլի ասուլիսում Ռուբեն Վարդանյանի մասին հարցին ի պատասխան հայտարարեց. «Այստեղ էլ շատ կարեւոր հարցեր կան, իսկ ինչ տեղի ունեցավ, ինչպես ստացվեց, որ ՌԴ քաղաքացիություն ունեցող Ռուբեն Վարդանյանը հրաժարվեց, ով նրան խորհուրդ տվեց կամ հանձնարարեց անել այդ քայլը, ով նրան ուղարկեց, այդ իմաստով՝ գործուղեց ՀՀ, ով նրան գործուղեց ԼՂ, ինչ նպատակով, ինչ երաշխիքներով, ինչ հավաստիացումներով, ինչ խոստումներով: Եվ ով վերջում ասաց՝ գիտեք ինչ, մենք այդքան էլ լավ չենք ճանաչում՝ ինքն ով է, որովհետեւ ինքն այլ երկրի քաղաքացի է: Այս հարցերին մենք ուզո՞ւմ ենք պատասխան ունենալ, թե՞ չենք ուզում»: Մինչդեռ ենթադրվում է, որ այդ հարցերը պետք է բարձրացներ եւ պատասխանները ստանար այն ժամանակ, երբ Վարդանյանը մեկնում էր Արցախ, եւ իր գործընկեր Արայիկ Հարությունյանն էլ նրան նշանակում էր պետնախարար:

Հիմա անգամ Ռուբեն Վարդանյանի ընտանիքին պատկանող ընկերության դեմ հայցեր են ներկայացվում դատարան, որպեսզի չեղարկեն կնքված պայմանագրերը: Դիլիջանի համայնքապետարանի ներկայացրած դատական հայցերը վատ կազդեն համայնքում ներդրումային միջավայրի վրա: Ն. Փաշինյանը Իլհամ Ալիեւի առաջ խնդիր չի դնում՝ գերիներին Հայաստան վերադարձնել, հակառակը՝ Ալիեւին մի քանի անգամ շնորհակալություն է հայտնել՝ Ադրբեջանից երկաթուղով, Վրաստանի տարածքով Հայաստան 4-րդ կարգի անասնակեր ցորեն եւ բենզին ներկրելու համար: Իսկ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ ՆՈՐ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՆ ԹԵՐԵՎՍ ՉԻ ՎՍՏԱՀՈՒՄ ԱՅԴ ՏԻԿՆՈՋԸ

Associated Press լրատվականի փոխանցմամբ՝ Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը որոշում է կայացրել հետ կանչել աշխարհի շուրջ 30 երկրում դիվանագիտական առաքելություն իրականացնող դեսպաններին ու բարձրաստիճան դիվանագետներին: Այդ դեսպանների շարքում է նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը: Պետդեպարտամենտում աշխատող երկու պաշտոնյա, ովքեր ցանկացել են անանուն մնալ, հայտնել են AP-ին, որ նախորդ շաբաթ առնվազն 29 երկրի դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ տեղեկացվել են, որ նրանց պաշտոնավարումը 2026 թվականի հունվարին ավարտվելու է: Այս բոլոր դիվանագետներն իրենց պաշտոնները ստացել են ԱՄՆ նախկին նախագահ Ջո Բայդենի պաշտոնավարման շրջանում: Լրատվական գործակալությունը նշում է, որ այս քայլով Թրամփը ցանկանում է արտերկրում ունենալ դիվանագետների, որոնք լիարժեքորեն աջակցում են «Ամերիկան՝ առաջինը» կարգախոսով հայտնի իր քաղաքական առաջնահերթություններին: Այսինքն, ԱՄՆ-ն արտերկրում փոխում է իր քաղաքականությունը եւ խիստ կրճատում է ծախսերը:

AP-ի աղբյուրները հայտնել են նաեւ, որ այս դիվանագետները Վաշինգտոն վերադառնալուց հետո կարող են զբաղեցնել այլ դիվանագիտական պաշտոններ, եթե նման ցանկություն հայտնեն: Պետդեպարտամենտը հրաժարվել է մեկնաբանել նորությունը՝ ասելով միայն, որ ցանկացած վարչակազմի դեպքում փոփոխությունները նորմալ գործընթացի մաս են կազմում: Պետդեպից նշել են, որ դեսպանը «նախագահի անձնական ներկայացուցիչն է, հետեւաբար, նախագահն իրավունք ունի վստահ լինելու, որ տվյալ երկրներում ունի անհատների, ովքեր առաջ են տանում «Ամերիկան՝ առաջինը» քաղաքականության օրակարգը»: Դիվանագետների ամենամեծաթիվ փոփոխությունները լինելու են Աֆրիկայում, մասնավորապես Բուրունդի, Կամերուն, Կաբո Վերդե, Գաբոն, Կոտ դ'Իվուար, Մադագասկար, Մավրիկիոս, Նիգեր, Նիգերիա, Ռուանդա, Սենեգալ, Սոմալի եւ Ուգանդա երկրներում: Ասիայում դիվանագիտական փոփոխություններ տեղի կունենան 6 երկրում՝ Ֆիջի, Լաոս, Մարշալյան կղզիներ, Պապուա Նոր Գվինեա, Ֆիլիպիններ եւ Վիետնամ: Associated Press-ի տվյալներով՝ եվրոպական տարածաշրջանում փոփոխություններ են լինելու Հայաստանում, Մակեդոնիայում, Մոնտենեգրոյում եւ Սլովակիայում, Մերձավոր Արեւելքում՝ Ալժիրում եւ Եգիպտոսում: Փոփոխություններ կլինեն նաեւ Նեպալում, Շրի Լանկայում, Գվատեմալայում եւ Սուրինամում: Հիշեցնենք, որ Քրիստինա Քվինը Երեւան է ժամանել 2023թ. փետրվարի 16-ին: Նա Հայաստանում Միացյալ Նահանգների 10-րդ դեսպանն է: Մինչ Հայաստան ժամանելը դեսպան Քվինը (2020-2022թթ.) եղել է ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատարն Ուկրաինայում:

Եթե ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ցանկանում է Բայդենի վարչակարգի կողմից նշանակված դեսպաններին հետ կանչել, ապա հարց է առաջանում՝ ինչո՞ւ մեր հարեւան Վրաստանում եւ Ադրբեջանում եւս դեսպանները հետ չեն կանչվում, նրանք նույնպես նշանակվել են Բայդենի վարչակարգի կողմից: Սա վկայում է այն մասին, որ ԱՄՆ նախագահը Հայաստանում իր դեսպանից դժգոհ է, իսկ մեր հարեւան երկրներում գոհ է:

Քաղաքագետ **Սուրեն Զոլյանին** հարցրինք՝ գուցե այս փոփոխությունը վկայում է այն մասին, որ Թրամփն ու Պուտինը, Հայաստանի հետ կապված, ընդհանուր հայտարարի են եկել, եւ տարածաշրջանը հանձնվում է ՌԴ վերահսկողությանը: Զոլյանն ասաց. «Ամեն դեպքում, շատերին է հետ կանչում, թեպետ դրանց շարքերում չկան մեր հարեւան պետությունների դեսպանները, սակայն փաստացի մի շարք այլ երկրների դեսպանների եւս հետ է կանչում: Չեմ կարծում, որ այստեղ լինի Պուտին-Թրամփ պայմանավորվածության արդյունք: Ես կարծում էի, որ այդ կնոջն ավելի շուտ հետ կկանչեն, քանի որ նա չափից շատ ակտիվ էր Բայդենի վարչակարգի ժամանակ: Նկատած կլինեք, հավանաբար, նա Թրամփի՝ իշխանության գալուց հետո աշխատում էր հրապարակային չերեւալ: Դեսպանի գործունեությունը ոչ թե լինում է անձնական նախաձեռնությունների տեսքով, այլ՝ հրահանգների, որոնք ինքը ստանում է, հատկապես, եթե խոսքը կայացած պետությունների մասին է: Փաստորեն, Թրիփ ճանապարհի հետ կապված՝ այս դեսպանի կողմից ոչ մի ակտիվություն չենք տեսել: Փոխարենը Թուրքիայում ԱՄՆ դեսպանն էր ակտիվություն ցուցաբերում, թեպետ Ադրբեջանում ԱՄՆ դեսպանն էլ ակտիվ չէր: Այս ամենը ցույց է տալիս, որ ԱՄՆ նոր ադմինիստրացիան առանձնապես չի վստահում այդ տիկնոջը: Այստեղ պետք չէ շատ լուրջ պատճառներ փնտրել: Այն հետաքրքրությունները, որ կային Հայաստանում, որոնք նաեւ ՌԴ-ին հակադրվելու առիթ էին, օրինակ՝ Արցախը, այլեւս չկան: Հայաստանի հանդեպ հետաքրքրությունը նվազում է.... սա եւս նախադեպ է: Ինչ վերաբերում է հարեւան երկրներին, ապա ասեմ, որ կային ժամանակներ, որ Ադրբեջանում տարիներով ԱՄՆ-ն դեսպան չէր նշանակում: Պատճառն այն էր, որ Ադրբեջանն ԱՄՆ-ի քաղաքականությունից դուրս էր մղված: Այնպես չէ, որ ԱՄՆ-ին ամենուր ակտիվ քաղաքականություն է հարկավոր»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՅՈՒ

ԵԹԵ ԴԱ ԵՂԱՎ, ՈՉ ՄԻ ԿԱՅԱ ԿԱԼԼԱՍ, ՈՉ ՄԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՄՈԴԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՉԻ ՓՐԿԵԼՈՒ

Նիկոլ Փաշինյանը նախօրեին մեկնեց Ռուսաստանի Դաշնություն՝ աշխատանքային այցով: Սանկտ Պետերբուրգում նա մասնակցել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստին, իսկ երեկ՝ ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովին, ապա առանձնազրույց է ունեցել Վլադիմիր Պուտինի հետ:

ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովը, որին մասնակցել է նաեւ Նիկոլ Փաշինյանը, տարին ամփոփող ավանդական խնջույքն է, պատկերավոր ասած՝ ռուսական ազդեցության տակ գտնվող երկրների ղեկավարների կորպորատիվ հավաքը, որով Պուտինն աշխարհին ցույց է տալիս, թե որ երկրներն են ռուսական ազդեցության գոտում: Հարց է ծագում՝ Հայաստանն ինչպե՞ս է մասնակցում այդ հավաքին, եթե ԵՄ-ին անդամակցելու հայտ է ներկայացրել, ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաները վերջին տարիներին բոյկոտում են ռուսական հարթակների միջոցառումները, ՀԱՊԿ-ում մեր անդամությունն են սառեցրել, էլ չենք խոսում, որ ՀՀ իշխանությունները դիմել են ԵՄ-ին՝ ընտրություններից առաջ Հայաստանին ՌԴ-ից պաշտպանելու, ակնկալվող հիբրիդային պատերազմի դեմ պայքարի համար, իսկ Ամենայն հայոց կաթողիկոսին եւ նրա եղբորն էլ ՌԴ հատուկ ծառայությունների գործակալ են հռչակել:

Քաղաքական լարախաղացությունը, ինչ խոսք, բնորոշ է այս իշխանությանը, բայց այս լարախաղացությունը մի պատճառ ունի՝ իշխանական աթոռները պահելը, հանուն որի նրանք ամեն ինչի ընդունակ են: Սակայն արդյո՞ք շարունակաբար մտրակի ու քաղցրաբլիթի քաղաքականություն կիրառող Ռուսաստանն այս անգամ էլ կհովանավորի Փաշինյանին եւ ինչպես 2021 թվականին լոյալություն դրսեւորեց նրա վերարտադրության հարցում, հիմա էլ երկակի խաղեր կվարի՝ մի կողմից աջակցելով ու ոգեւորելով ընդդիմությանը, մյուս կողմից՝ Փաշինյանին, որն այլեւս չի թաքցնում իր բացասական վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ եւ պատրաստ է անգամ թուրք-ադրբեջանական տանդեմին ենթարկվել, միայն թե թոթափի Ռուսաստանից կախվածությունը:

«Ի՞նչ է կորցրել Փաշինյանը ՌԴ-ում»,- մեր հարցին քաղաքագետ **Սուրեն Սուրենյանցը** պատասխանեց. «Ընդհանրապես, տրամաբանական կլիներ Հայաստանի ղեկավարի մասնակցությունը ԵԱՏՄ բոլոր գագաթնաժողովներին եւ, առհասարակ, ռուսական հարթակների միջոցառումներին՝ կլինի ՀԱՊԿ, ԱՊՀ եւ այլն, որովհետեւ մենք երկկողմ եւ բազմակողմ դաշնակցային պայմանագրերով հարաբերություններ ունենք հենց այդ երկրների հետ: Սովորական իրավիճակում, կարծում եմ՝ Դուք այդ հարցը չէիք տա, բայց, մյուս կողմից, հարցը լեգիտիմ է, որովհետեւ Հայաստանի իշխանությունը չի հրաժարվում երկրի ստրատեգիական կողմնորոշումը փոխելու մոլագար ցանկությունից, եթե անգամ դրա համար որեւէ նախադրյալներ չկան, եւ, այո, ներքաղաքական նպատակներով շահարկում է հիբրիդային պատերազմի թեման»:

Նիկոլ Փաշինյանը, քաղաքագետի խոսքով, անգամ արտաքին քաղաքականությունն է ծառայեցնում իր ներքին օրակարգին, այն է՝ ընտրություններից առաջ փորձում է աշխարհաքաղաքական բոլոր կենտրոնների հետ դրական հարաբերություններ կառուցել՝ հնարավոր ռիսկերից իրեն ապահովագրելու նպատակով: «Օրինակ, 2021 թվականին ինքը Պուտինի նկարի առջեւ մոմ վառելով վերարտադրվեց: Հիմա արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիայի է փորձում ենթարկել իր շփումները»: Մինչդեռ իրականում Փաշինյանն իր ընտրությունը կատարել է եւ «Հայաստանը վերածել է Արեւմուտքի նեոլիբերալ գլոբալիստական ուժերի ֆորպոստի»: Միեւնույն ժամանակ փորձում է Ռուսաստանի եւ նրա հետ աֆիլացված կառույցների հետ հարաբերություններ պահպանել:

Իսկ այն, ինչ Փաշինյանին հաջողվեց իրագործել 2021-ին, կհաջողվի՞ նաեւ 2026-ին, չէ՞ որ 5 տարի առաջ ՌԴ-ԵՄ հակասություններն այսքան խորացած չէին, որքան հիմա, եւ Հայաստանն էլ ակնհայտ հակառուսական կուրս է վերցրել: «Այո, 2021 թվականին չկար մի կարեւոր բան՝ արեւմտյան որեւէ կենտրոն չէր փորձում Հայաստանին օգտագործել Ռուսաստանի դեմ, որովհետեւ իրենք ՀՀ խնդիրները գիտակցում էին եւ ըմբռնումով էին մոտենում ՀՀ արտաքին քաղաքական կուրսին, հիմա իսկապես վիճակ է փոխվել: Նիկոլ Փաշինյանի հույսը թերեւս այն է, որ ինքը կարող էր այդ հակասությունների վրա խաղալ, յուրաքանչյուրի հետ հարաբերություններում ինչ-որ կարմիր գծեր պահպանել եւ այդպիսով լուծել իր խնդիրը»:

Սուրենյանցի համոզմամբ, Փաշինյանն այս անգամ կհաջողի մի դեպքում միայն, եթե Հայաստանում չձեւավորվեն ընդդիմադիր այլընտրանքային արդյունավետ կենտրոններ: «Եթե նման կենտրոններ չձեւավորվեն, ինքն էլ իշխանության է, ամեն դեպքում, աշխարհաքաղաքական յուրաքանչյուր կենտրոնի ինչ-որ տալու բան ունի, բայց եթե ուժեղ ընդդիմադիր այլընտրանքային կենտրոններ ձեւավորվեն, այս տրամաբանությունը չի աշխատի»,- վստահեցրեց քաղաքագետը: Բայց բոլորը պնդում են, որ աշխարհաքաղաքական կենտրոններին ձեռնտու է թույլ ղեկավարը, որ ինչպես ուզեն, այնպես կառավարեն: «Իհարկե, դա այդպես է, բայց համաշխարհային գլոբալ հակադրությունն այնպիսի մակարդակի վրա է, որ Ձեր ասած թույլ ղեկավարը հաճախ ստիպված է լինում որեւէ կենտրոնի ուղղությամբ ավելի սերտ քայլեր անել, ինչի պատճառով մեծանում է մյուս կենտրոնից հարված ստանալու հավանականությունը»,- ասաց Սուրենյանցը: «Իսկ ո՞վ ասաց, որ աշխարհաքաղաքական կենտրոնները պետք է որոշեն՝ ով է լինելու Հայաստանում իշխանությունը, որ ասում եմ՝ այլընտրանքային ուժեղ կենտրոնների ձեւավորում, դա ենթադրում է, որ հասարակական սուբյեկտությունն այն մակարդակի պետք է բարձրացնեն, որ աշխարհաքաղաքական կենտրոնները դրանց հետ հաշվի նստեն, իսկ եթե դա չեն կարողանում անել, արտաքին կենտրոններից յուրաքանչյուրն այս երկրից վերցնելու է այն, ինչ կարողանալու է»: Նրա խոսքով, այս պահին կան նշաններ, որոնք հավանական են դարձնում 3-4 կենտրոնների ձեւավորումը, որոնք կարող են խափանել Փաշինյանի ծրագրերը: «Փաշինյանն ամեն ինչ պիտի անի, որ ընտրություններին մասնակցեն քիչ թվով մարդիկ, որպեսզի իշխանական ռեսուրսներն ու ռեպրեսիաները կշիռ ունենան, ընդդիմության խնդիրը պետք է լինի 50+1 տոկոս մասնակցություն ապահովելը, եթե դա եղավ, հավատացնում եմ Ձեզ, ոչ մի Կայա Կալլաս, ոչ մի մոլդովական մոդել Փաշինյանին չի փրկելու»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Յ-ՕՐՅԱ «ԿԱՅՖԵՐ»՝ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ «ՄՈՍԿՎԱ» ԱՌՈՂՋԱՐԱՆՈՒՄ Է

ԳԱՄՍ նախարարության Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրեն Արմեն Փաշայանը խորհրդաժողով է կազմակերպել՝ «Ավարտական դասարաններում սովորողների գիտելիքների ամփոփիչ ստուգումների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության եւ ուսուցիչների ատեստավորման կազմակերպման, գնահատման եւ բովանդակային հիմնահարցերը» թեմայով, որը կայանալու է դեկտեմբերի 22-24-ը, Ջերմուկ քաղաքում: Խորհրդաժողովին մասնակցում են ինչպես ԳԹԿ աշխատակիցներ, ոլորտի մասնագետներ, այնպես էլ Երեւանի քաղաքապետարանի աշխատակիցներ եւ Երեւանի վերահսկողության տակ գտնվող մի քանի դպրոցի տնօրեններ:

Տեղեկացանք, որ խորհրդաժողովին մասնակցելու է Քրիստինե Դումանյանը՝ «Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան հ. 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը: Ի դեպ, Դումանյանի նշանակումը տնօրենի պաշտոնում նախորդ տարի մեծ աղմուկ առաջացրեց, նա Տիգրան Ավինյանի կնոջ ազգականն է, ամուսինն էլ՝ ուժային կառույցի աշխատակից: Խորհրդաժողովին մասնակցելու են նաեւ Նարգիզ Զեյնալյանը՝ Երեւանի Յակոբ եւ Լյուտովիկա Այնթապլեանների անվան հ. 87 միջնակարգ դպրոցի տնօրեն, Նաիրա Մանվելյանը՝ Երեւանի Լեւոն Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոցի տնօրեն, Մարգարիտ Քուշկյանը՝ Երեւանի Արտեմ Միկոյանի անվան հ. 166 հիմնական դպրոցի տնօրեն: Գործուղման հետ կապված ծախսերը հոգում է ԳԹԿ-ն:

Իհարկե, պարզ է, որ որոշել են Ամանորից առաջ մի թեթեւ ռելաքսի մեկնել Հայաստանի լավագույն հանգստի վայրերից մեկը՝ «գործուղում» անվան տակ: Մենք ԳԹԿ-ից հետաքրքրվեցինք՝ ինչո՞ւ է ընտրվել Ջերմուկ քաղաքը, Երեւանի դպրոցների տնօրեններին ի՞նչ իմաստ ունի այդքան հեռու տանել՝ խորհրդաժողովն ավելի մոտիկ վայրում հնարավոր չէ՞ր կազմակերպել, եւ ինչո՞ւ հենց այդ դպրոցների տնօրենները, ինչքա՞ն գումար է հատկացվել, եւ կոնկրետ որտե՞ղ է տեղի ունենալու խորհրդաժողովը:

ԳԹԿ մամուլի խոսնակ **Խաչանուշ Գրիգորյանը** մեր հարցերին պատասխանեց. «Ջերմուկն ընտրվել է մրցույթով, մրցույթ է հայտարարվել, որին մասնակցել է, ի թիվս այլ առողջարանների, «Մոսկվա» առողջարանը: Առաջին տարին չէ, որ այնտեղ ենք անցկացնում, մի քանի անգամ իրենք հաղթել են, եւ այնտեղ անցկացրել ենք: Մեկ անգամ, հիշում եմ, Աղվերանում էր: ՊՈԱԿ-ների մասին օրենքի համաձայն՝ մեկ անձից գնումներ չենք արել, պարզապես գնումներով զբաղվող մասնագետն էլ էր այնտեղ գնացել: Թե կոնկրետ ինչքան գումար է տրամադրվել, կկարողանա պատասխանել վերադարձին: Մենք ներկայացնում ենք մեր տեխնիկական պայմանները, ինչ չափի դահլիճ ենք ուզում, քանի փոքր դահլիճ ենք ուզում, որովհետեւ հանրակրթության մասնագետներն իրենց խնդիրներն են քննարկում, բուհերի մասնագետները՝ իրենց: Եվ, օրինակ, կառավարության որոշումը՝ միասնական քննությունների վերաբերյալ, դուրս է գալիս նոյեմբերին, դրա հետ կապված բոլոր նորությունները դեկտեմբերին են հայտնի դառնում, որ հավանական դիմորդները տեղեկացված լինեն: Կառավարության այդ որոշումից հետո, եթե փոփոխություններ լինում են, նաեւ դրանք են քննարկվում: Մի խոսքով՝ ամեն ինչ, տարվա մեր բոլոր գործառույթները, հաջորդ տարվա հետ կապված նորությունները քննարկվում են, եւ հերթական քննարկում-սեմինարը դեկտեմբերի 22-ից մեկնարկել է»:

«Ջերմուկ Մոսկվա» առողջարանը Ջերմուկի ամենահին բուժական հաստատություններից է՝ իր հսկայական բուժական բազայով: Այստեղ, որպես կանոն, այցելում են բուժական պրոցեդուրաներ ընդունելու՝ աղեստամոքսային խնդիրներից ու կավով հոգնայից մինչեւ էլեկտրասրտագրություն է կատարվում: Առողջարանի պատասխանատուներից հարցրինք՝ ի՞նչ արժե մեկ անձի համար մեկ օրվա կեցությունը, պատասխանեցին՝ 22 հազար դրամ՝ ներառյալ 3-անգամյա սնունդն ու բուժական պրոցեդուրաները: Իսկ եթե միայն գիշերակացից եւ սննդից օգտվի անձը, այսինքն՝ բուժական պրոցեդուրան հարկավոր չլինի, որքա՞ն կարժենա, ասացին՝ այդպիսի փաթեթ չունենք, 22 հազար դրամը մեկ անձի համար է՝ լրիվ փաթեթով:

Այսինքն, ոլորտի մասնագետները, քաղաքապետարանի աշխատակիցները, դպրոցի տնօրենները կարող են խորհրդաժողով անել, հանգստանալ, միաժամանակ օգտվել իրենց առողջարանի բուժական ծառայություններից:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Երվանդ Բոզոյանն** է:*

ՉԿԱ ԽՍՀՄ-Ը, ԴՐԱ ՏԵՂԸ ԲՈՒՍՆԵԼ Է ԵՄ-Ն

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Իշխանությունը մեկ շաբաթ առաջ Եվրոպայում՝ ԵՄ-ից օգնություն էր խնդրում՝ Ռուսաստանի Դաշնության կողմից տարածվող կեղծիքի, հիբրիդային պատերազմի դեմ պայքարի հարցում, եւ դրա դիմաց գումարների խոստում ստացավ: ԵՄ պաշտոնյաները հայտարարեցին, որ օգնելու են Հայաստանին, որ դիմակայի ռուսական միջամտություններին, եւ Մոլդովայի սցենարն են կիրառելու, որ Փաշինյանի իշխանությունը վերարտադրվի: Իսկ այս օրերին Փաշինյանը մեկնել է Մոսկվա, երջանիկ դեմքով լուսանկարներ՝ Պուտինի հետ, շնորհակալություններ: Հասարակությունը դադարում է հասկանալ այս ծայրահեղ ու հակասական պահվածքը, տպավորություն է, թե Փաշինյանը տառապում է անձի երկվությամբ եւ չի հիշում, թե ինչ էր ասում եւ անում ընդամենը մի քանի օր առաջ: Ի վերջո՝ ինչ է նշանակում այս ամենը:

- Պետք է ավելի շատ պրոցեսների բովանդակությանը նայենք, այլ ոչ թե ձեւին: Ֆորմալ իմաստով որպես պրոցես անտրամաբանական չէր լինի, եթե Հայաստանի վարչապետը տարբեր երկրներ գնար եւ փոխլրացնող քաղաքականություն վարեր: Այլ խնդիր է, որ Նիկոլ Փաշինյանի քաղաքականության բովանդակությունը բոլորովին այլ բանի մասին է խոսում: Սկսենք ԵՄ-ից: ԵՄ-ի ներկայացուցիչները փաստացի պնդում են, որ Փաշինյանն իրենց խնդրել է օգնել, աջակցել, որովհետեւ Հայաստանի դեմ իբրեւ կարող է հիբրիդային պատերազմ սկսվել Ռուսաստանի Դաշնության կողմից, եւ Արեւմուտքը պետք է այս հարցում աջակցի Հայաստանին: Փաշինյանը բավականին լուրջ ռեսուրսներ ունի, նա բնավ ֆինանսական օգնության կարիք չուներ, այստեղ հարց կառաջանա, իսկ ինչո՞ւ գնաց այդ քայլին, որովհետեւ ԵՄ-ն հրապարակավ հայտարարել էր, որ Փաշինյանին աջակցում է որպես Ռուսաստանի դեմ աշխատող գործչի: Փաշինյանի համար կարեւոր էր զուտ, որ նա ստանա նման աջակցություն, եւ նա ստացավ: Սա շատ կարեւոր է իր համար, որպեսզի գալիք ընտրությունների ժամանակ, հասարակության այն շերտին, որը ԵՄ-ով հիացած է, սրտատրոփ սպասում է վիզաների ազատականացմանը եւ այլն, այդ զանգվածից ստանա քվեներ: Նա նաեւ ակնկալում է աջակցություն Թուրքիայից եւ Ադրբեջանից: Ինչպես պետք է լինի այդ աջակցությունը: Այդ երկրները պետք է հայտարարեն, որ դրական են վերաբերվում Հայաստանին, որ պատրաստ են հայերի հետ առեւտուր անել, բենզին բերել եւ այլն: Թուրքիան էլ կհայտարարի, որ սահմաններն է բացելու եւ այլն: Եթե այս բոլոր հայտարարությունները հնչեն, Նիկոլ Փաշինյանին կհաջողվի հասարակության վախեցած զանգվածին հավատացնել, որ խաղաղության դարաշրջանը եկել է: Այդ ամենի հաշվին նա կստանա քվեներ: Այսինքն՝ Փաշինյանն իր բոլոր քայլերը՝ Եկեղեցու դեմ արշավից մինչեւ Թրամփի երթուղի, պայմանավորում է նախընտրական քարոզարշավով: Ինչու, որովհետեւ այդ մարդը գիտի, որ յոթ տարի շարունակ խայտառակ քաղաքականություն է վարել եւ երկիրը հիմնահատակ ավերել է, ուստի նա ունի անասնական վախ, որ կարող է կորցնել իշխանությունը: Տեսնելով, թե հարեւան Վրաստանում ինչ է կատարվում Սահակաշվիլու հետ, նա վախենում է, որ նույն բանը կարող է իր հետ պատահել: Ուստի ամեն ինչ անում է, որ 2026-ի ընտրություններով պահի իշխանությունը: Այն իր համար գոյաբանական խնդիր է: Այս ընտրությունը զուտ քաղաքական ընտրություն չէ նրա համար: Նա ամեն ինչ անելու է, որպեսզի բոլոր կողմերի հետ հարաբերությունները կարգավորի: Ինչ մնում է Ռուսաստան կատարած այցին, ապա ավանդաբար դեկտեմբերի 22-ին Վլադիմիր Պուտինն այսպիսի այցեր է կազմակերպում ԱՊՀ երկրների համար: Նախորդ տարի Փաշինյանը չգնաց, որովհետեւ Ալիեւը չէր գնացել, քանի որ ադրբեջանական ինքնաթիռ էր խոցվել: Փաշինյանի կյանքի նպատակն էլ Ալիեւն է, հատկապես՝ հիմա, որ կարողանա վերարտադրվել: Քծնանքի հուշ-երեկոներ է կազմակերպում նրա համար: Շնորհակալություն է հայտնում, ամեն բան անում է, որպեսզի նախքան ընտրությունները կնքվի այդ խաղաղության պայմանագիր կոչվածը, եւ ինքն ընտրություններին հաջողության հասնի: Նա մարդկանց ապացուցելու խնդիր ունի, որ ինքը խաղաղություն բերող է:

- Կարծիքներ կան, որ ԵՄ-ից օգնություն խնդրելով՝ Փաշինյանը պատրաստվում է ընտրություններին կիրառել Մոլդովայի օրինակը:

- Փորձելու են կրկնել Մոլդովայի օրինակը, սակայն դա իրենց մոտ չի ստացվելու: Մոլդովայում Սանդուն պարտվեց, սակայն կարողացան հաղթանակ կորզել մոլդովական սփյուռքի կողմից: Օրենքներն այնպես փոխեցին, որ դրսում ապրող մոլդովացիները կարողանան մասնակցել ընտրություններին: Հասկանալի պատճառներով, դրսի դեսպանատներում չես կարող ընտրությունները պատշաճ վերահսկել, հասկանալի պատճառներով, ԵՄ երկրներում աշխատող կառույցները կողմ են, որ նման իշխանությունները վերարտադրվեն, թեպետ կան փաստեր, որ իրականում Մոլդովայի պարագայում մարդիկ դրսում այնքան էլ ակտիվ չէին: Իտալիայի տեղամասերում դատարկություն էր: Բայց, օրինակ, Մոսկվայում կար ընդամենը երկու ընտրատեղամաս, եւ մարդիկ անգամ չէին կարողանում ընտրություններին նորմալ մասնակցել: Հայաստանում, սակայն, այն չի ստացվելու: Իրավիճակները տարբեր են: ԵՄ-ն դարձել է ԽՍՀՄ-ի պես մի կառույց: Թեպետ ձեւով տարբերվում են, սակայն բովանդակությամբ շատ նման են: ԽՍՀՄ-ն էլ փորձում էր փաթաթել իր կարծիքն այլոց վրա, ներխուժում էր Չեխիա, Լեհաստան եւ այլն եւ թույլ չէր տալիս, որ այդ ժողովուրդներն ինքնորոշվեն: Այժմ նույն բանն անում է ԵՄ-ն, սակայն՝ փափուկ ձեւով: Չկա ԽՍՀՄ-ը, տեղը բուսնել է ԵՄ-ն: Ի դեպ, ԵՄ-ի կենտրոնական կառույցները ոչ մեկի կողմից չեն ընտրվում: Նշանակովի կառույցներ են: Փաստացի, նրանք անգամ իրենց ժողովուրդների առաջ պատասխանատվություն չեն կրում:

ԼՍԵՑԻ ԱՅԴ ԲԱՌԸ՝ ՔԱՇԱԼԻՍ ՎՐԱ ՄՆԱՑԱԾ 3 ՄԱԶԸ ԲԻԶ-ԲԻԶ ԿԱՆԳՆԵՑԻՆ, ԱՍԱՑԻ, ՈՐ ՄՈՆՏԱԺԵՆ

ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Զուրաբյանը Ֆեյսբուքի իր էջում նախօրեին գրել էր, որ դեկտեմբերի 21-ին՝ կիրակի օրը, Հանրային ռադիոյին հարցազրույց է տվել, որը տեղադրվել է Ռադիոյի յութուբյան էջում, սակայն որոշ ժամանակ անց հեռացվել է բոլոր հարթակներից: Հարցազրուցավարը լրագրող Սարգիս Հարությունյանն է, որից փորձեցինք մեկնաբանություն խնդրել, թե ինչպես է ստացվել, որ իր հեղինակած հաղորդաշարի հերթական թողարկումն անհետացել է համացանցից, սակայն նա մեր հեռախոսազանգերին չպատասխանեց: Զրուցել ենք Հանրային ռադիոյի տնօրեն **Արմեն Քոլոյանի** հետ:

- Պարոն Քոլոյան, ինչո՞ւ է Լեւոն Զուրաբյանի հարցազրույցը հեռացվել Հանրային ռադիոյի կայքէջից, նաեւ՝ ֆեյսբուքյան էջից: Ի՞նչ է դա նշանակում:

- Մոտ մեկ ժամ սպասեք, այդ հարցազրույցն անպայման կլինի կամ գուցե արդեն կա, չգիտեմ: Կլինի նաեւ պարզաբանում:

- Այսինքն՝ հարցազրույցը եթեր գնալո՞ւ է նորից: Ինչո՞ւ էր հեռացվել այդ դեպքում:

- Հարցազրույցը եղել է կիրակի օրը, այն հենց այդպես էլ կոչվում է՝ «Կիրակի», եթեր է գնում հենց այդ օրը: Հարցազրույցում հայտնաբերվել է մի անթույլատրելի հանգամանք, այն շտկելու համար հանվել է նյութը, հիմա արդեն մոնտաժն ավարտվել է, եւ կգնա նորից համացանց:

- Ի՞նչ անթույլատրելի հանգամանք: Ի՞նչ է ասել Լեւոն Զուրաբյանը, որ անթույլատրելի եք համարել: Նիկոլի Փաշինյանի՞ն է սուր քննադատության ենթարկել:

- Ես հիմա այդ մասին չեմ խոսի, բայց խոստանում եմ, որ Դուք կտեսնեք, որ մենք կպարզաբանենք:

- Իսկ Զուրաբյանին տեղեկացրի՞լ եք, որ իր խոսքերը մոնտաժելու եք, գուցե նա դեմ լինի, չհամաձայնի, որ իր միտքն աղճատվի:

- Չէ, մենք ինչո՞ւ պետք է նրա հետ համաձայնեցնենք, դա արդեն իր պրոբլեմն է: Երբ գնում ես հարցազրույցի, հարցազրույց նկարողը միշտ էլ ունի իր հայեցողությամբ խմբագրումներ անելու իրավունք: Խմբագրվել է ընդամենը մեկ բառ, ոչ ավելի:

- Ի՞նչ բառ:

- Չէ, չեմ ասի:

- Ձեր արածը գրաքննություն չէ՞:

- Դա Ձեր մեկնաբանությունն է:

- Մեկնաբանություն չէ, հարց է: Օրինակ՝ «Հրապարակ»-ում երբեւիցե չի եղել նման դեպք, որ հարցազրույց վերցնենք, եւ այն չհրապարակվի, կամ զրուցակցի խոսքը գրաքննվի:

- Բայց եթե անհաջող բան է ասվում, չկա՞ իրավունք՝ այն խմբագրելու: Եթե խմբագիրը տեսնի, որ անհաջող խոսք է ասվում, չի՞ կարող այն խմբագրել:

- Բոլորն էլ անհաջող մտքեր հայտնում են, հարցն այն է, որ զրուցակցի խոսքը կրճատելը կամ հեռացնելը գրաքննություն է:

- Իսկ եթե զրուցակիցը ոչ ճիշտ խոսք է ասում:

- Ի՞նչ խոսք: Նայած ում համար ինչն է ոչ ճիշտ: Հայհոյանքն այլ հարց է, քննադատությունը՝ լրիվ այլ հարց:

- Չէ, քննադատությունը քավ լիցի: Երբ լսեք այդ հարցազրույցը, այնքան քննադատություններ կտեսնեք, որ կասեք՝ իյա, էս Հանրայինը թո՞ւյլ է տվել, որ այն գնա եթեր: Այո, Հանրայինը թույլ է տալիս: Ամեն դեպքում, ես տալու եմ նաեւ պարզաբանում:

- Հարցազրույցի հրապարակումից հետո ո՞վ է որոշել հեռացնել, ապա մոնտաժել այն:

- Ես եմ տեսել: Քանի որ ես նյութեր չեմ խմբագրում, չեմ էլ նայում: Լիքը նյութեր են գնում, ես հո չեմ կարող բոլորի փոխարեն խմբագրել: Վստահելով լրագրողի փորձին, անգամ չեմ էլ լսել, սրանից հետո էլ չեմ լսելու նախապես, ուղղակի հետո լսեցի, ու այդպես: Ի դեպ, առուդիո կտորում չի եղել այն, ինչն իմ զայրույթն է հարուցել, այն եղել է վիդեո տարբերակում:

- Այդ դեպքում ինչո՞ւ եք մարդկանց հրավիրում Ռադիո, որոնց խոսքը, տեսակետները ձեզ դուր չեն գալիս, եւ այն մոնտաժում եք, գրաքննում: Միայն Վահագն Ալեքսանյանին, Հարություն Մկրտչյանին, Լիլիթ Դալլաքյանին հրավիրեք ամեն օր եթեր, որ նման խնդիրներ չառաջանան:

- Ես նման բան չեմ կարող անել: Դա կլինի էթիկայի խախտում: Եթե Դուք էլ լսեիք այդ խոսքը, Դուք էլ գուցե այն խմբագրեիք: Իմ կրեդոն այն է, որ բոլորը կարող են գալ Ռադիո, բացի Դոգից: Ես միայն Դոգին եթեր չեմ տա, որովհետեւ նա պարզապես հայհոյում է, ուրիշ ոչինչ, իսկ մնացածները թող գան: Այ մարդ, եկեք, քլնգեք, փաստարկված խոսեք, բայց վիրավորական արտահայտություններ մի արեք: Լեւոնը Զուրաբյան կուլտուրական տղա է, այնպես էլ չէ, որ նա մեր է քրֆել, բայց այն բառամթերքը, որ նա օգտագործել է, չափազանց վիրավորական է: Ես հանել եմ այդ մի բառը: Լսեցի այն՝ քաչալիս վրա մնացած երեք մազը բիզ-բիզ կանգնեցին: Անմիջապես զանգեցի հեղինակին եւ ասացի, որ կարգադրի այն հանեն, որպեսզի մոնտաժվի:

- Իսկ իշխանականների հայհոյանքի հանդեպ ճիւ այդքան ուշադիր եք:

- Այո, այն չի գնա եթեր, եթե, իհարկե, ուղիղ եթեր չէ: Բացահայտորեն վիրավորանքն անթույլատրելի է: Կլինի այն Լեւոն Զուրաբյանի մասին, թե Լեւոն Տեր-Պետրոսյանի կամ մեկ այլ ուրիշի մասին, ես այն կկտրեմ: Իմ հավատամքը դա է: Առանց այդ էլ մեր ազգը շատ նյարդային վիճակում է, պետք չէ շրիշակի մակարդակից ցածր իջնել: Հանրային ռադիոյի դռները բոլորի առաջ բաց են, եկեք, բացի Դոգից:

ԲԵՆԶԻՆ

ՔՊ խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանին պատկանող «Սիլ կապիտալ» ընկերության մաս կազմող «Մեգա թրեյդ»-ի տնօրեն Կարեն Հայրիյանն ասել է, որ Հայաստան ներմուծված ադրբեջանական պրեմիում կարգի բենզինի մանրածախ գինը ընկերությանը պատկանող «Ռան օյլ» բենզալցակայաններում լինելու է 440 դրամ: Հայաստանում պրեմիում բենզինի մեկ լիտրը վաճառվում է 520 դրամով, ռեգուլյար բենզինինը՝ 500 դրամով: Խաչատուր Սուքիասյանը հատուկ է իր ներկայացուցչի միջոցով ադրբեջանական բենզինի գովազդ անում, որ երբ մարդիկ բենզալցակայանում տեսնեն 440 դրամ գին, իմանան, որ ադրբեջանական բենզին են լցնում: Ի՞նչ եք կարծում. Հայաստանում շատե՞ր կցանկանան ադրբեջանական, բայց էժան բենզին գնել, իմ կարծիքով՝ շատ-շատերը, բենզալցակայանների մոտ հերթեր կառաջանան, եւ 1300 տոննա բենզինը կսպառվի շատ կարճ ժամանակում: Ադրբեջանական բենզինի համար հերթերի տեսարանները նկարելով, իշխանությունները կասեն. տեսեք, թե որքան մարդ է կողմ հայ-ադրբեջանական հաշտեցմանը, տեսեք, որ մարդկանց համար որեւէ բարոյական կամ հոգեբանական արգելք չկա ադրբեջանական բենզին կամ ցանկացած այլ ապրանք գնելու հարցում, կարեւորը մարդկանց համար ապրանքի գինն է, մարդկանց չի հետաքրքրում ապրանքի ծագման երկիրը, եթե ապրանքն էժան է, ինչո՞ւ չպետք է գնեն: Իշխանությունը դրանով հասարակությանը ցույց կտա, որ ադրբեջանահպատակեցման իրենց քաղաքական գծի մեջ իրենք միայնակ չեն, հայ հասարակության մի զգալի մասն աջակցում է իրենց այդ քաղաքականությանը:

Իսկ ո՞վ է ասել, թե հասարակությունը կազմված է միայն հայրենասերներից կամ ազգային կայուն արժեքներ ունեցող մարդկանցից, չէ՞ որ այդ նույն ՔՊ-ականները այս հասարակության ծնունդն են, նրանք օդից չեն իջել, եւ նրանց նման մտածող ու գործող մարդիկ կան նաեւ հանրային տարբեր շերտերում, կան բազմաթիվ մարդիկ, որոնց համար հայրենիքը, հայրենասիրությունը, հայրենիքի կորուստը, արժանապատվությունը որեւէ արժեք չունեն, նրանք իրենց 100 հազար դրամը գերադասում են մյուս բոլոր արժեքներից ու սկզբունքներից: Հարցը միայն այն է, որ ցանկացած պետություն, իշխանություն իր երկրում քարոզում եւ խրախուսում է հենց վերոնշյալ արժեքները եւ ոչ թե հակառակը: Եթե, իհարկե, պետությունը զավթված չէ հակառակորդի կողմից, եւ պետության ղեկին գտնվողները չեն կատարում իրենց նշանակողների կամքը, որը հակասում է այդ երկրի եւ հասարակության շահերին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՅ ԱԴՐԲԵՋԱՆԱՍԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Օրերս փաշինյանական Հանրային հեռուստաընկերության եթերում հարցազրույց էր տալիս իշխանության քարոզիչներից մեկը՝ Ստյոպա Սաֆարյանը: Երբ հարցազրույց վարողը նրան հարց տվեց, թե ինչ է նշանակում հիբրիդային պատերազմ, նա բավական ճշգրիտ բնորոշում տվեց՝ մեջբերեմ ամբողջությամբ. «Ժամանակակից աշխարհում երբ սոցիալական ցանցերի եւ գլոբալիզացման շնորհիվ եւ պատճառով ընդհանուր սահմանները չեն համընկնում պետությունների աշխարհագրական քաղաքական սահմանների հետ, եւ շատ հեշտ է ներթափանցել տվյալ երկրներ, փոխկապվածությունները մեծացել են, բնականաբար, ավելացել են թշնամական մտադրություններ իրականացնելու գործիքակազմերը, որոնց միջոցով փորձում են հասնել այդ երկրում քաղաքականության վերանայման՝ այն նպատակներով, որ ցանկանում է տվյալ հիբրիդային սպառնալիք հարուցող պետությունը կամ տվյալ երկրում իշխանության փոփոխությամբ: Թիրախը երկու բան է՝ փոխել իշխանությունը եւ բերել իշխանության այնպիսի մարդկանց կամ խմբերի, որոնք կիրականացնեն ցանկալի քաղաքականություն, կամ բերել երկիրը, հասարակությունը այնպիսի հասարակական կարծիքի, քաղաքական կարծիքի դաշտ, որտեղ կընդունվեն այն որոշումները, որոնք պետք են տվյալ երկրին»: Ասածն այն էր, որ հիբրիդային պատերազմը ռազմական եւ քարոզչական գործիքների համակցումն է, համատեղ օգտագործումը՝ որեւէ պետության եւ հասարակության նկատմամբ տիրապետություն հաստատելու համար, որի նպատակը տվյալ երկրում հնազանդ իշխանություն եւ հասարակություն ունենալն է:

Նայեք Հայաստանին եւ կհամոզվեք, որ մենք գործ ունենք հիբրիդային պատերազմի արդյունքում ադրբեջանական գերության մեջ հայտնված մի երկրի հետ. սկզբում Ադրբեջանը Հայաստանի դեմ մի քանի պատերազմ մղեց՝ գրավելով Արցախն ու Հայաստանի տարածքի մի մասը, իսկ մնացած տարածքը փորձում է գրավել իր կողմից հնազանդեցված ու իր հրահանգները հեզաճկուն ձեւով կատարող իշխանությունների միջոցով: Բայց քանի որ Հայաստանում կա այդ քաղաքականության նկատմամբ հանրային դիմադրություն, Ադրբեջանն ու իր հայաստանյան դրածոները փորձում են կոտրել նաեւ այդ հանրային դիմադրությունը, Հայաստանի հասարակության մեջ եւս ստեղծել ադրբեջանահպատակեցման կողմնակիցների մի լայն շերտ, ովքեր կասեն՝ Ադրբեջանի ենթակայության տակ կլինենք, թե Թուրքիայի, մեզ համար էական չէ, կարեւորը՝ բենզինը, ցորենը կամ շաքարը էժան լինեն: Սա ոչ միայն հակապետական եւ հակաբարոյական է, այլ նաեւ ոչ ռացիոնալ, կործանարար: Սուքիասյանի վաճառած էժան բենզինն ընդամենը կուտ է, խայծ, թակարդ, այնպես, ինչպես խայծի հետեւից ընկնող խաբված ձուկն է շատ կարճ ժամանակ հետո հայտնվում թավայում, իսկ թակարդում դրված պանիրը կծող մկան համար դառնում է վերջին սնունդը, որն ինքը չի էլ մարսելու, այնպես էլ բանականության հետ կապը չկտրած յուրաքանչյուր մարդ պետք է հասկանա, որ ադրբեջանական էժան բենզինն ընդամենը մի քանի ժամվա հաճույք է պատճառելու՝ հետագայում դառնալով մահաբեր թույն մի ամբողջ երկրի եւ հասարակության համար: Արդյո՞ք հայ մարդը զրկվել է բանականությունից եւ ոչնչով չի տարբերվում մկներից ու ձկներից, թե՞, այնուամենայնիվ, որոշ բան մնացել է, մենք կտեսնենք շատ մոտ ապագայում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՕՏԱՐ ԱՉՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԸ ՀԱՅ Է, ԲՈԼՈՐԸ՝ ՄԻ ՍԱՆՐԻ ԿՏԱՎ, ԲՈԼՈՐԸ՝ ՆԻԿՈԼ

Նիկոլ Փաշինյանը, պիտի ասել, իր իշխանության տարիներին լուրջ հաջողություններ է արձանագրել ամեն ինչ քանդելու, փչացնելու ուղղությամբ: Ես երբ հիշում եմ, թե Նիկոլից առաջ մենք ինչ զգացմունքներ էինք տածում «պետություն», «անկախություն», «ինքնիշխանություն», «տարածքային ամբողջականություն», «պատերազմ», «խաղաղություն», «ժողովրդավարություն» բառերի ու հասկացությունների նկատմամբ ու ինչ ենք զգում հիմա, սկսում եմ զզվել ինձնից: Մի՞թե ես էլ մեկն եմ նրանցից, որ այսպես խաղաղ գոյատեւում են Արցախի կորստի, Հայաստանի բզկտված սուվերենության, Թուրքիայից ու Ադրբեջանից վասալական կախվածության, ազգային արժեքների նկատմամբ հալածանքների, ներքաղաքական քաոսի պայմաններում: Ներսից ուտում եմ ինքս ինձ, բայց ի՞նչ օգուտ՝ օտար աչքի համար հայը հայ է, բոլորը՝ մի սանրի կտավ, բոլորը՝ Նիկոլ, բոլորը՝ խայտառակված, անդեմ, անգույն, պարտված, թրջված, միջազգային հարաբերություններում՝ կապիկ, ընդհուպ՝ «քցող»:

Ի թիվս այլ բաների, Նիկոլը մեր աչքից գցեց նաեւ խորհրդարանական կառավարման համակարգը: Մտածում էինք՝ փառք Աստծո, հասել ենք այնտեղ եւ նախագահական ու կիսանախագահական ռեժիմներից անցում ենք կատարում խորհրդարանական կառավարման համակարգի: Սահմանադրական հանրաքվե, համոզիչ «Այո»... Ահա, ահա, անցնում էինք առաջավոր երկրների շարքը, մեկ էլ 2018 թվականի փորձանքը պատահեց: Դեռ նախագահական ժամանակների տրեխները չէինք հասցրել հանել, որ Նիկոլը եկավ: Եկավ ու... Առը հա քեզ խորհրդարանական կառավարում: «Սերժ Սարգսյանի հագով կարված» կոստյումը գցեց վրան ու սկսեց կառավարել: 2018-ի հոկտեմբերի 2-ին արդեն Փաշինյանը գրոհեց ԱԺ-ն՝ այն «հիմնարկը», որն իրեն մի քանի ամիս առաջ վարչապետ էր ընտրել՝ ժողովրդին ծառայելու համար: Նման բան խորհրդարանական կառավարմամբ երկրներում երբեք չէր եղել: Հասարակ ժողովուրդը, տեսնելով այդ, Փաշինյանին մեծարեց «սուպերվարչապետ» անունով, իսկ քաղաքական էլիտան հասկացավ, որ Նիկոլի գալով՝ երկրի գլխին «սուպերփորձանք» է կախվել: Եվ էլիտան չէր սխալվում: Նիկոլն իր «սուպերվարչապետությունը» հաջորդիվ ցուցադրեց 2019թ. մայիսին՝ հարձակվելով դատարանների վրա: Անհասկացող խավը ողջունեց վարչապետի «քաջությունը», իսկ էլիտան շարունակեց մնալ իր կարծիքին՝ «Նիկոլը փորձանք է»: Այդ ժամանակից Նիկոլի ձեռքում էին բոլոր տիպի իշխանությունները՝ օրենսդիր, գործադիր, դատական: Բայց խորհրդարանական կառավարմամբ ո՞ր երկրում նման բան կար, ո՞ր երկրի վարչապետի մատի շարժումով էր աշխատում խորհրդարանը, կամ ո՞ր վարչապետի խոսքով՝ դատարանը: Այնպես որ, քաղաքական էլիտան շատ մեղմ էր գնահատում իրավիճակը... Ոչ թե Նիկոլն էր փորձանքի պես կախվել երկրի գլխին, այլ երկիրն էր ընկել ք.քը, մենք էլ՝ երկրի հետ:

Ահա, արդեն 8 տարի է՝ այդ վիճակում ենք: Այս ընթացքում ինչ «սուպերվարչապետություն» ասես, որ Նիկոլը չարեց: Չթվարկեմ, որովհետեւ պիտի խոսեմ քովիդի օրերի այլանդակություններից, պատերազմ սանձազերծելուց, Շուշին հանձնելուց, կապիտուլյացիայից, ազգային արժեքների ոտնահարումից, Եկեղեցու դեմ նրա սանձազերծած պայքարից ու էլի լիքը վատ բաներից, որոնք տեղի ունեցան նրա միանձնյա որոշումներ կայացնելու արդյունքում: Բայց չէ՞ որ այդ ընթացքում մենք խորհրդարանական երկիր էինք... Իբր...

Ու չհասկացող խավի մեջ աստիճանաբար սկսեց ձեւավորվել այն թյուր կարծիքը, թե խորհրդարանական կառավարումը վատ բան է, ու մեր դժբախտությունը կառավարման մոդելի մեջ է: Դա, իհարկե, այդպես չէ: Կառավարման մոդելը մեղք չունի: Այլ հարց է, թե ով է կառավարիչը: Նիկոլը դառնար ՀՀ նախագահ՝ ամեն ինչ ավելի վատ էր լինելու, քան հիմա, երբ նա վարչապետ է կամ «սուպերվարչապետ»: Այսինքն՝ խնդիրը Նիկոլն է եւ ոչ թե երկրի կառավարման մոդելը: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որ դեռ էն գլխից առանձնապես ոգեւորված չէր խորհրդարանական կառավարման մոդելով, օրերս խոսել էր այն մասին, որ մենք շտապել ենք խորհրդարանական կառավարման մոդելին անցնելիս, եւ իշխանափոխությունից հետո պետք է դիտարկել կառավարման կիսանախագահական ձեւին անցնելու տարբերակը: Լինելով խորհրդարանական կառավարման մոդելի կողմնակից՝ այնքան էլ չեմ կիսում Ռոբերտ Քոչարյանի այս տեսակետը, բայց մի բանում նրա հետ լիովին համաձայն եմ՝ ինչ էլ անենք, պետք է անենք իշխանափոխությունից, այսինքն՝ Նիկոլին հեռացնելուց հետո: Չէ, դուք պատկերացնո՞ւմ եք, որ Նիկոլը մի հատ էլ նախագահ կամ կիսանախագահ դառնա: Ականջը չընկնի, հանկարծ... Մեկ էլ տեսար՝ Ալիեւի պահանջով անցկացվող սահմանադրական հանրաքվեի մեջ այդ հարցն էլ ներառի ու, ինչպես Թուրքիայի վարչապետ Էրդողանն արեց տարիներ առաջ, դառնա նախագահ:

ՀԳ. *Ամեն դեպքում, մի հատ խաչակնքվեք...*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԵԿԵՂԵՑԻ

ՆԱՎԱՍԱՐԴ ԿՃՈՅԱՆԻՆ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երբ Վեհափառ հայրապետի ամենամոտ մարդկանցից մեկը՝ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, որին նա մշտապես հովանավորել է եւ զերծ պահել պատժից, դուրս եկավ իր հոգեւոր առաջնորդի դեմ եւ Եկեղեցուն հայտարարված պատերազմի գործուն մասնակիցը դարձավ, տարբեր մարդիկ սկսեցին խոսել Արարատյան հայրապետական թեմի փոխառաջնորդ Կճոյանի բացասական կերպարի մասին՝ օֆշորային հաշիվներ, փողերի լվացում ու յուրացումներ, գույքի ապօրինի ձեռքբերում, զենք, «Բենթլի», կուսակրոնության ուխտի խախտումներ եւ այլն: Նիկոլ Փաշինյանի կողմից Եկեղեցին բարենորոգելու, մաքրելու գործին նման մարդկանց ներգրավումը հանրային տարակուսանքի եւ վրդովմունքի տեղիք տվեց: Եվ սկսեցին Կճոյանի մասին տարբեր պատմություններ ջրի երես ելնել:

«Հրապարակի» հետ զրույցում կարգալույծ արված քահանա **Տեր Հակոբ Բագրատունին** ասաց, որ Կճոյանը միայն այդ մեղքերով չէ, որ աչքի է ընկել. «Ուզում եմ բարձրաձայնել Կճոյան Նավասարդ արքեպիսկոպոսի «քաջագործություններից», որ նա արել է՝ վայելելով Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի հովանավորչությունը: 2008 թ. Կճոյանը գրագողությամբ վերատպել է հոգեւոր ճեմարանի իմ հարգելի ուսուցչի եւ երկար տարիների ընկեր Անանիա արքեպիսկոպոս Արաբաջյանի՝ «Պատարագամատոյց Հայաստանեայց Եկեղեցւոյ» 2002 թվականին Նյու Յորքում տպագրված՝ Հայ եկեղեցու պատմության մեջ բացառիկ արժեք ունեցող գիրքը: Օրերս իմ փաստաթղթերի հավաքածուի մեջ պատահաբար աչքովս ընկավ «Հայկական ժամանակ» թերթում 2008 թ. տպագրված՝ «Հեղինակի անունը կարեւոր չէ» վերնագրով հոդվածը, որտեղ նկարագրվում է Կճոյան Նավասարդ արքեպիսկոպոսի «քաջագործություններից» մեկը՝ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի «կնքահայրությամբ» իրականացված: Խոսքը 2008թ. արված գրագողություն մասին է: «Հայկական ժամանակի» հոդվածում նկարագրվում է, որ 1999 թ. Ամերիկայի հայոց թեմի այն ժամանակվա առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանն ԱՄՆ է հրավիրում Ադրբեջանի հայոց թեմի նախկին առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսին, որպեսզի վերջինս հոգեւոր մխիթարություն պարգեւի Ադրբեջանից փախստական դարձած իր հոտին: Միացյալ Նահանգներ գալու առաջին իսկ օրերից Անանիա սրբազանն այցելում է երկրի բոլոր նահանգները, պատարագներ է մատուցում, կատարում է մկրտության, պսակադրության խորհուրդներ՝ հոգեպես մխիթարելով եւ սատարելով իր թշվառ հոտին: 2000-ին, Խաժակ արքեպիսկոպոսի առաջարկությամբ, Անանիա սրբազանը ձեռնամուխ է լինում «Պատարագամատույցի» եռալեզու աշխատությանը, որը լույս է տեսնում Նյու Յորքում երկու տարի անց՝ 2002 թվականին, դրամական մեծ եկամուտ բերելով բուն առաջնորդարանին»:

Սակայն 2007 թվականին՝ կուսակրոնության ուխտը խախտած լինելու պատճառով, սրբազանն անձամբ հրաժարվում է եկեղեցական իր բարձր աստիճանից ու տիտղոսից, անհնար գտնելով կեղծիքով ապրելը: Ապա աշխարհական անունը ստացած Ավետիք Արաբաջյանը տեղափոխվում է եւ ներկայում բնակվում է Ֆլորիդայում ու, հակառակ իր տարիքին, մինչ օրս էլ ստեղծագործում է՝ մոտ 6 տարբեր լեզուներով գրքերի հեղինակ է: «Սրբազանն անձամբ մեծագույն արհամարհանքով է վերաբերվում այդ երկու «սրբազանների» մանր ու նենգ արարքին, միշտ մեջբերելով անմահ Սայաթ-Նովայի ասածը՝ «Ծովեմեն ավազ չի պակսի»: Հիմա՝ գրագողության մասին, որը կապված է այսօր սրբապիղծ աղանդավորների կողմը թեքված՝ ուխտադրուժ եպիսկոպոսներից մեկի անվան հետ: Ես մինչ այժմ այդ մասով խոսք չեմ բարձրացրել, որպեսզի չդիտվի, որ մեր սուրբ եկեղեցու թշնամիների ջրաղացին եմ ջուր լցնում: Ես դեռ 1999թ. դեկտեմբերի 1-ին հենց առաջինը կարգալույծ հռչակված հոգեւորականն եմ՝ տեր Հակոբ, ավազանի անունով՝ Աշոտ Բագրատունին եմ: Սակայն, այդուհանդերձ, ես կամ եւ մնում եմ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրյալ զավակն ու անսասան պաշտպանը: Մենք բավական հիմնավոր եւ իրեղեն փաստեր ունենք, որ Կճոյանը գիտակցված է նման արարք արել, իսկ այսօր էլ Եկեղեցու դեմ է դուրս եկել: 2008 թվականին Անանիա արքեպիսկոպոս Արաբաջյանի՝ 2002-ին հեղինակած գիրքը, միայն ավելի բարակ եւ աշխարհաբար՝ գրաբարն ու ռուսերենը չկային, հեղինակի անունը հանած, գրեթե նույնանման կազմով ու գույնով, տպում են այստեղ՝ Երեւանում, եւ դրվում է եկեղեցիների խանութներում՝ վաճառքի: Այդ գիրքը մեր ընկերներից մեկը գնում է՝ հենց Սուրբ Սարգիս եկեղեցուն կից գրախանութից: Ի դեպ, երբ որ լուրը տեղ է հասնում, ու հասկանում են, որ գրքի հեղինակը տեղյակ է այդ մասին, գրքերը մեկ օրվա մեջ խանութներից հանում են, ու վաճառքը դադարում է, որովհետեւ Խաժակ սրբազանն ԱՄՆ-ից զանգում եւ զգուշացնում է սպասվող տհաճ հետեւանքների մասին»,- ասաց կարգալույծ հոգեւորական Աշոտ Բագրատունին:

Նա նշեց, որ Կճոյանը եւ այն ժամանակ ԱՄՆ-ում Արեւելյան թեմի առաջնորդ, այժմ Արեւմտյան Եվրոպայում հայրապետական պատվիրակ նշանակված Խաժակ Պարսամյանը, համաձայնության գալով, հրատարակում են գիրքը՝ վաճառելու նպատակով, բայց հետո, խուսափելով դրա շուրջ բարձրացած աղմուկից, որոշում են կասեցնել վաճառքը՝ հայտարարելով, թե իբրեւ գիրքը չի վաճառվել, այլ նվիրատվություններ են արել, ձրի բաժանել են: «Վաճառել ես կամ բաժանել ես եկեղեցիներին, լավ ես արել, հեղինակի անունն ինչո՞ւ ես դուրս հանել: Անանիա սրբազանը, օրինակ, իր գրքի մեջ ազնվորեն նշել է իր օգտագործած աղբյուրների հեղինակներին՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանց, Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյան, իսկ այս երկու «սրբազաններն» իրենց հոգեւոր եղբոր աշխատանքը վերցրել ու իրենց անվան տակ հրատարակել են ու դեռ ներածական են գրել»,- ասաց տեր Հակոբ Աշոտ Բագրատունին:

Նավասարդ Կճոյանի կողմից գրագողության մասին չեն բարձրաձայնել, քանի որ երկար ժամանակ է, ինչ թիրախավորված է Գարեգին կաթողիկոսը, սակայն իրականում այդ արշավը Եկեղեցու դեմ է, չեն բարձրաձայնել, որ տպավորություն չստեղծվի, թե աջակցում են աղանդավորների հակաեկեղեցական արշավին: Իսկ քանի որ Կճոյանն անցել է աղանդավորականների կողմը, այլեւս իրենց զսպող հանգամանք չկա՝ շեշտում է մեր զրուցակիցը եւ հավելում. «Այս հարվածը Գարեգին կաթողիկոսի դեմ չէ՝ Հայ առաքելական սուրբ եկեղեցու դեմ է, ես՝ ինքս, ունենալով հակասություններ կաթողիկոսի հետ, ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ աջակցելով աղանդավորների՝ Եկեղեցու դեմ արշավին, թշնամական ու Աստծո դեմ քայլ են անում: Պաշտպանելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, առաջին հերթին, մենք մեզ ենք պաշտպանում, մենք մեր՝ հայի ինքնությունն ենք պաշտպանում: Իսկ այս կճոյանները, որ Եկեղեցու դեմ են դուրս եկել, թող իմանան՝ եթե կառավարիչն իրենց նկատմամբ կոմպրոմատներ ունի ու վախեցրել է իրենց, որ իրենց դեմ կօգտագործվի, թող իմանան, որ ժողովուրդն իրենց մասին նույնպես շատ բան գիտի, եւ, փառք Աստծո, մեր ժողովուրդը հիշողության կորուստ չունի»,- եզրափակեց տեր Հակոբ Աշոտ Բագրատունին:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԱՁԴԵՑ ՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՎՐԱ ՊՈՒՏԻՆԻ «ՈՒՂԻՂ ԿԱՊԸ»

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի այս տարվա ամփոփիչ՝ «ուղիղ կապ» ասուլիսը, ըստ էության, ձեւավորեց հատկապես ներքին կյանքի եւ կառավարման համակարգերում նոր թեզիսներ, որոնք միանգամից ընկալվեցին իշխանական ողջ համակարգի կողմից: Ըստ այդմ, առաջնային պլան բերվեց արվածը, իսկ խնդիրների քննարկումները գնացին երկրորդ պլան: Դա հատկապես երեւաց առանձին ռեգիոնների նահանգապետերի ելույթներից: Հիմնական շեշտադրումներն այս տարվա ընթացքում ունեցած նվաճումներին ու ձեռքբերումներին էին վերաբերում: Առողջապահական, սոցիալական, բնակ-կոմունալ եւ այլ համակարգային խնդիրները, ինչպես նաեւ սոցիալական հարցերը դրվեցին երկրորդ պլանում: Նաեւ հատուկ ուշադրության տակ հայտնվեցին հեռանկարային ծրագրերը: Սա հասկանալի է:

Գալիք տարին ՌԴ-ում նախընտրական է՝ դաշնային օրենսդրական մարմնի ընտրություններ են լինելու: Նույն տրամաբանությունը սկսել է գործել նաեւ տեղեկատվական դաշտում: Դրական լուրերը իրենց համամասնությամբ սկսել են ավելի գերակշռել բացասականներին՝ ռուսաստանյան տեղեկատվական ընդհանուր տիրույթում: Միաժամանակ, ռեգիոնալ իշխանությունների համար նոր մարտավարություն է մշակվել, ըստ էության, որը դրվում է կիրառության մեջ: Իշխանություն-քաղաքացի ուղիղ կապը սկսել է թուլանալ: Այլ կերպ ասած՝ ռեգիոնալ իշխանություններն այլեւս հաճախակի չեն այցելում այս կամ այն տարածք ու բնակավայր, իսկ քաղաքացիների ընդունելությունն էլ կամ վերածվում է ֆորմալ երեւույթի, կամ հաճախակի չի արվում: Այս ամենը բավականին խնդրահարույց է: Եթե ավելի ուշադիր լինենք, ապա այն բոլոր խնդիրները, որոնք կան Ռուսաստանում սոցիալ-տնտեսական պլանում, մեծ հաշվով, այդ երկրի համար դարձել են «հավերժական խնդիրներ»: Ու դրանք հատկապես հիմա կարգավորելը կամ մեղմելը, երբ տնտեսական դժվարություններ կան, ու երկիրն էլ, ըստ էության, արդեն քանի տարի է, գտնվում է փաստացի պատերազմական վիճակում, անհնարին է:

Սակայն միաժամանակ այս ամենը չի կարելի, որ դառնա հանրային լայն շրջանակների քննարկման առարկա ու, Աստված մի արասցե, վերածվի հստակ քաղաքական ձեւակերպված պահանջի: Հետեւաբար, ընտրվել է ամենից «անվնաս» տարբերակը՝ խոսել պարտավորությունների կատարման ֆորմալ արդյունքների ու ցուցանիշների մասին՝ լինեն դրանք ֆինանսական, տնտեսական կամ այլ, իսկ դժգոհությունների տեսակարար կշիռը որքան հնարավոր է նվազեցնել, դժգոհողների հարթակներն էլ մարգինալացնել կամ դարձնել կառավարելի: Զուգահեռաբար՝ Պուտինի «ուղիղ կապից» հետո ինֆորմացիոն հոսքում նաեւ այնպիսի թեզիսներ սկսեցին ներդրվել, որոնց համաձայն՝ քաղաքացիների համար ոչ այնքան կարեւոր են իրենց անձնական բարեկեցության հետ կապված հարցերը, որքան սոցիալական արդարության, ինքնության եւ գաղափարական արժեքների հետ կապված հարցերը: Ի դեպ, եթե մինչ այժմ հատկապես այս վերջին թեզիսները կիրառվում էին զուտ քարոզչական առումով, այժմ դրանք կարծես թե սկսել են դառնալ քաղաքական գծի մաս:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

2025-Ի ՑԱՎԱԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ. ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ, ԲԺԻՇԿՆԵՐ, ՀԱՆՐԱՅԻՆ ԴԵՄՔԵՐ

Կյանքի ու մահվան հարապտույտում անցնող տարին եւս բոթաբեր էր՝ կորուստներով լի: Հեռացողների թվում մեր հայտնի հայրենակիցներն էին, մարդիկ, որոնք իրենց կենսագործունեությամբ ուրույն հետագիծ են թողել թե՛ իրենց սիրելիների, թե՛ իրենց ճանաչողների եւ թե՛ հասարակության լայն շրջանում: Եվ նրանց հիշելն ու հիշատակելը մարդկային պարզ գնահատանքի նշան է:

Բնականաբար, անհնար է հիշել բոլոր նրանց, որոնք լքել են այս աշխարհը: Այդուհանդերձ, հիշենք մի քանիսին.

ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆ

2025-ի սկիզբը եղերական եղավ հայրենասեր մի գործչի համար, որի պայքարն ու առաքելությունը Հայաստանի եւ Արցախի ճակատագիրն էր: Ցավոք, սեփական ճակատագիրն էլ նույնքան ողբերգական էր, որքան իր հայրենիքինը: Հունվարի 13-ին ողբերգական ավտովթարի հետեւանքով մահացավ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Մհեր Սահակյանը: Սահակյանի մարմինը հայտնաբերվել էր ձորն ընկած մեքենայում: Մհեր Սահակյանը ծնվել է 1988թ., 2022-ից ընդդիմադիր խմբակցության անդամ էր:

ՏԻԳՐԱՆ ՔԵՈՍԱՅԱՆ

Ռուսաստանաբնակ հայազգի հայտնի կինոռեժիսոր, հեռուստատեսային հաղորդավար Տիգրան Քեոսայանի մահվան լուրը հայտնի դարձավ 2025 թ. սեպտեմբերի 26-ին: Նա 59 տարեկան էր: 2024 թվականի դեկտեմբերին սրտի կաթված ստացավ, ծանր վիճակում հոսպիտալացվեց, իսկ մի քանի օր անց՝ 2025 թվականի հունվարի 9-ի գիշերը կլինիկական մահ ապրեց: Բժիշկներին հաջողվեց վերականգնել նրա սրտի աշխատանքը, սակայն վերակենդանացման միջոցառումներից հետո ռեժիսորը կոմայի մեջ ընկավ: Մի քանի ամիս Քեոսայանը գոյատեւում էր կենսապահովման սարքերի միջոցով: Երբեմն սկսում էր արձագանքել արտաքին ազդակներին: Նրա կինը՝ «Ռոսիա թըդեյ մեդիահոլդինգի» գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանը, երկար ժամանակ հրապարակային հայտարարություններ չէր անում ամուսնու առողջական վիճակի մասին եւ որոշեց խոսել միայն այն ժամանակ, երբ լրագրողների շրջանում սկսեցին տարածվել տեղեկություններ: Նա գործնականում չէր հեռանում ամուսնուց, իսկ մահվանից հետո խոստովանեց, որ կորստի ցավն անտանելի է, բայց դիմանում է՝ հանուն իր երեխաների: Քեոսայանի հրաժեշտի արարողությունը տեղի ունեցավ Մոսկվայի Օլիմպիական պողոտայի հայկական եկեղեցական համալիրի Սուրբ Խաչ եկեղեցում:

ՆԻԿԻՏԱ ՍԻՄՈՆՅԱՆ

Նոյեմբերի 24-ին հայտնի դարձավ, որ վախճանվել է խորհրդային լեգենդար ֆուտբոլիստ եւ մարզիչ, Ռուսաստանի ֆուտբոլային միության առաջին փոխնախագահ, Մոսկվայի «Սպարտակի» լավագույն ռմբարկու Նիկիտա Սիմոնյանը: Օլիմպիական չեմպիոնի մահվան մասին հայտնել էր Ռուսաստանի ֆուտբոլային վետերանների միության նախագահ Ալեքսանդր Միրզոյանը: Նիկիտա Սիմոնյանը հոկտեմբերի 12-ին դարձել էր 99 տարեկան: «Սպարտակի» 9-րդ համարը ակումբի կազմում խփել է 160 գոլ՝ ավելի քան վեց տասնամյակ մնալով անհասանելի ռեկորդակիր: Ակումբի թանգարանում Սիմոնյանին նվիրված է առանձին տաղավար, որի վրա հազիվ են տեղավորվում նրա բազմաթիվ մրցանակներն ու գավաթները: Սիմոնյանն ավարտել է կարիերան փառքի բարձունքում: Արտասահմանյան լրատվամիջոցները նրան անվանել են մոլորակի լավագույն կենտրոնական հարձակվողներից մեկը: Կարիերան ավարտելուց հետո Սիմոնյանը հաջողության է հասել նաեւ որպես մարզիչ. Մոսկվայի «Սպարտակի» հետ հաղթել է ԽՍՀՄ առաջնությունը 1962 եւ 1969 թվականներին, իսկ 1973 թվականին նրա գլխավորությամբ Երեւանի «Արարատը» հաղթանակ է տարել ԽՍՀՄ առաջնությունում եւ Գավաթում, պատմություն, որն իրավամբ հայկական ֆուտբոլի ոսկե դարն է, իսկ դրա կերտողներից մեկը հենց Սիմոնյանն էր: Նիկիտա Սիմոնյանը «Սպարտակի» կազմում մի քանի անգամ դարձել է ԽՍՀՄ չեմպիոն եւ դարձել ակումբի պատմության լավագույն ռմբարկուն: ԽՍՀՄ հավաքականի առաջին գոլի հեղինակն է աշխարհի առաջնություններում (Շվեդիայում, 1958 թ.): Ավելի վաղ ՌԴ նախագահ Պուտինը Նիկիտա Սիմոնյանին շնորհել էր Ռուսաստանի աշխատանքի հերոսի կոչում՝ ռուսական ֆուտբոլի զարգացման եւ մասսայականացման գործում ունեցած մեծ ավանդի, ինչպես նաեւ՝ պետությանը մատուցած հատուկ ծառայությունների համար:

ՎԱՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բախտի չար հեգնանքով, նույն օրը՝ նոյեմբերի 24-ին, ցավալի լուր ստացվեց հայկական մարզաշխարհի մեկ այլ հանրահայտ ներկայացուցչի մահվան մասին: 39 տարեկանում կյանքից հեռացավ տիտղոսակիր բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը: Ըստ The Ring պարբերականի՝ մահվան պատճառը քաղցկեղն է, որի դեմ մարզիկը պայքարում էր վերջին շրջանում: Մարտիրոսյանն իր մարզական ուղին սկսել է օլիմպիական ռինգից՝ 2004 թվականին ներկայացնելով ԱՄՆ-ն Աթենքի օլիմպիական խաղերում: 20 տարեկանում սկսել է պրոֆեսիոնալ կարիերան՝ նվաճելով WBA International, WBC Silver եւ WBO Inter-Continental տիտղոսները առաջին միջին քաշային կարգում: Բռնցքամարտիկը երեք անգամ մենամարտել է աշխարհի չեմպիոնի կոչման համար (երկու անգամ՝ առաջին միջին, մեկ անգամ՝ միջին քաշային կարգում), սակայն բոլոր դեպքերում պարտություն է կրել: Կարիերայի վերջին մենամարտը Վանեսն անցկացրել է 2018 թվականին՝ միջին քաշային կարգի միավորված տիտղոսների համար պայքարում՝ երկրորդ ռաունդում նոկաուտով զիջելով լեգենդար Գենադի Գոլովկինին: Ընդհանուր առմամբ, պրոֆեսիոնալ ռինգում Վանես Մարտիրոսյանն անցկացրել է 41 մենամարտ՝ գրանցելով 36 հաղթանակ (21-ը՝ նոկաուտով), 4 պարտություն եւ 1 ոչ-ոքի:

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՀԱԿՅԱՆ

Դեկտեմբերի 6-ը հերթական ծանր ու սեւ ամսաթիվն էր հայ հանրության համար: Բազմաթիվ մարդկանց կյանքը փրկած Մարդն անզոր է փրկել սեփական կյանքը՝ 72 տարեկանում կյանքից հեռացավ անվանի բժիշկ, ԵՊԲՀ պատվավոր պրոֆեսոր, միկրովիրաբույժ Արտավազդ Սահակյանը: Հրաշագործ բժիշկը «Հերացի» հիվանդանոցային համալիրի պլաստիկ վիրաբուժության եւ միկրովիրաբուժության կլինիկայի ղեկավարն էր, ԵՊԲՀ պլաստիկ վիրաբուժության ամբիոնի վարիչը: Սահակյանի ղեկավարած թիմի շնորհիվ մի շարք բարդ ու առաջին հայացքից անհավանական թվացող վիրահատություններ են կատարվել: 1984 թվականից Արտավազդ Սահակյանի ղեկավարած թիմի աշխատանքները ներկայացվել են Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Կանադայի, մի շարք այլ երկրների մասնագիտական հավաքների ժամանակ: Նրա բուժառները ոչ միայն Երեւանից ու մարզերից էին, այլեւ տարբեր աշխարհամասերից: Ի դեպ, պլաստիկ եւ միկրովիրաբուժության բնագավառում բացառիկ միջամտություններ կատարած վիրաբույժ Սահակյանը մասնագիտական երկարամյա աշխատանքի ընթացքում կատարել է շուրջ 50 հազար վիրահատություն:

ԼԵՎՈՆ ՕԳԱՆԵԶՈՎ

Դեկտեմբերի 13-ին, Նյու Յորքում երկնային ուղին բռնեց խորհրդային դաշնակահար ու կոմպոզիտոր, Ռուսաստանի ժողովրդական արտիստ Լեւոն Օգանեզովը: Դերասանի մահվան մասին սոցցանցերում հայտնել էր նրա դուստրը՝ Մարիան: Երաժիշտը կյանքից հեռացել է օնկոլոգիական հիվանդության դեմ երկարատեւ պայքարից հետո: Նա դեկտեմբերի 25-ին կդառնար 85 տարեկան: Օգանեզովը համագործակցել է բազմաթիվ հայտնիների՝ Կլավդիա Շուլժենկոյի, Վալենտինա Տոլկունովայի, Իոսիֆ Կոբզոնի, Անդրեյ Միրոնովի հետ: Նկարահանվել է մի քանի ֆիլմում, այդ թվում՝ «Անձրեւի հետքը» ու «Ննջասենյակի բանալին», աշխատել է որպես հեռուստահաղորդավար:

Կորուստների շարքը, իհարկե, այսքանով չի սահմանափակվում: Հուսանք՝ տարին առանց նոր կորստի կճանապարհենք:

Արա ԱԼՈՅԱՆ

ԹԱՂԻ ՏՂԱՆԵՐԸ ԿՌՎԵԼ ԵՆ, ՄԵԿԻՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐՈՎ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ԲԿ

Վերջերս Տավուշի մարզի Իջեւան համայնքի հանրակրթական դպրոցներից մեկում 4-րդ դասարանցի, 10 տարեկան տղա է ծեծի ենթարկվել: Նրան վնասվածքներով տեղափոխել են Իջեւանի բժշկական կենտրոն: Մենք դեպքի առնչությամբ հարցում ենք արել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին: Մարզպետի աշխատակազմից մեզ հայտնել են. ««ՀՀ Տավուշի մարզի Իջեւան քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի աշակերտների միջեւ տեղի ունեցած վիճաբանությունը եղել է դասերի ավարտից հետո՝ տուն գնալու ճանապարհին: Դեպքից հետո միջադեպին մասնակից աշակերտների ծնողները հրավիրվել են դպրոց, որոնց հետ եւս տարվել է համապատասխան աշխատանք՝ միջադեպի պարզաբանման ուղղությամբ: Դեռեւս որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել, տեղի ունեցած դեպքն առաջին օրվանից գտնվում է իրավապահ մարմինների տիրույթում»:

Իջեւանի թիվ 4 դպրոցի տնօրեն Արմեն Խոջայանը մեզ հայտնեց, որ դեպքը եղել է, երբ 3 տղաներով տուն գնալիս են եղել: Նրանք նույն թաղից են: Համադասարանցի տղաներից մեկը վիրավորական խոսք է ասել մյուսի հասցեին, նա էլ հարվածել է վիրավորողին: Տեսնելով, որ իր հարվածից համադասարանցու շրթունքը պատռվել է, արյուն է հոսում, հարվածողը վնասվածք ստացած տղային ուղեկցել է հիվանդանոց: Տնօրենն ասաց, որ միջադեպը քննարկվել է դպրոցում, իր կողմից հանձնարարականներ են տրվել, այդ թվում՝ ուսուցչի օգնականին: Տնօրենի խոսքերով՝ դեպքը համացանցում ուռճացված է ներկայացվել՝ խմբակային ծեծ չի եղել, համադասարանցիներ, թաղեցի տղաների մեջ այժմ նորմալ հարաբերություններ են: Նկատենք, որ բռնությունների դեպքերն ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ դեռահասների շրջանում խիստ աճել են:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆՆ ՈՒ ԿԻՆՈՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1930-ական թվականներին Արամ Խաչատրյանը սկսեց կինոնկարների համար երաժշտություն գրել: Ինչպես հիշում են ժամանակակիցները, մեծանուն կոմպոզիտորն իրոք կլանված աշխատում էր այդ ուղղությամբ, եւ նրան կարծես թե դուր էր գալիս կինոերաժշտություն գրելը: Ու թերեւս դրա շնորհիվ է, որ սովետական 25 ֆիլմում մենք կարող ենք լսել Խաչատրյանի գրած երաժշտությունը:

1935 թվականին «Հայկինոյում» ռեժիսոր Համո Բեկնազարյանը, ըստ Գաբրիել Սունդուկյանի համանուն պիեսի, նկարահանեց առաջին հայկական հնչյունային կինոն՝ «Պեպոն»: Կինոնկարի երաժշտությունը գրեց Արամ Խաչատրյանը: Կինոերաժշտություն գրելու ճանապարհին դա նրա առաջին փորձն էր: 1938-ին արդեն «Զանգեզուր» պատմահեղափոխական կինոնկարն էր նկարահանվում: Այս ֆիլմի ռեժիսորը եւս Համո Բեկնազարյանն էր՝ Յա Դուկորի հետ: «Զանգեզուրում» Խաչատրյանը հանդես եկավ որպես սիմֆոնիկ կինոերաժշտության վարպետ: Որոշ սկզբունքներ, որոնք դրվել էին այդ կինոնկարի երաժշտության հիմքում, հետագայում իրենց արտացոլանքն ստացան «Սպարտակ» բալետում եւ Ջութակի կոնցերտում, ինչպես նաեւ՝ այլ կինոնկարների համար գրված երաժշտություններում: «Պեպոյի» եւ «Զանգեզուրի» համար գրված երաժշտությունների համար նա 1938 թվականին արժանացավ Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման:

1938-ին Խաչատրյանը գրեց տաջիկական առաջին ֆիլմի՝ «Պարտեզ» կինոնկարի համար երաժշտություն: Կինոնկարի ռեժիսորն էր Ն. Դոստալը: 1940 թվականին արդեն Խաչատրյանի երաժշտությունը կարելի է լսել պատմահեղափոխական «Սալավաթ Յուլաեւ» կինոնկարում, որի ռեժիսորն էր Վ. Պրոտազանովը: Հատկապես արդյունավետ է եղել Արամ Խաչատրյանի եւ ռեժիսոր Միխայիլ Ռոմի համագործակցությունը: Նրանք ծանոթացել են 1943 թվականին, երբ Ռոմը նկարահանում էր «Մարդ՝ համար 217» կինոնկարը՝ Տանյա անունով աղջկա մասին էր, որը գերի էր ընկել ֆաշիստների մոտ: Ֆիլմում հիմնական գործողությունները ծավալվում էին 42 թվականին: Հազարավոր այլ տղամարդկանց ու կանանց հետ՝ Տանյան տեղափոխվում է Գերմանիա: Գերմանիայում նա հայտնվում է ոմն Քրաուսի ընտանիքում, որի տանն արդեն իսկ կար մի գերի՝ պրոֆեսոր Սերգեյ Իվանովիչը: Նրա հետ էլ Տանյան հաղթահարելու է բոլոր սարսափները, որ կարող է ունենալ գերությունը, եւ երազելու է փախուստի ու ազատության վերագտնման մասին: Այս կինոնկարում Արամ Խաչատրյանը փայլուն կերպով երաժշտության լեզվով արտահայտել է մարդկային այնպիսի էմոցիաներ, ինչպիսիք են՝ բողոքը, ընդվզումն ու դժգոհությունը: «Ես պարտավոր էի դրամատուրգի եւ ռեժիսորի հետ իմ վերաբերմունքն արտահայտել այդ փաստի նկատմամբ: Երաժշտությունը պետք է հանդիսատեսին բերեր խորը հոգեկան հուզմունքի եւ զայրույթի»,- այդ մասին մի առիթով ասել է Խաչատրյանը:

Որոշ ժամանակ անց Ռոմն առաջարկում է Խաչատրյանին՝ գրել երաժշտություն «Ռուսական հարց» կինոնկարի համար (1947): Խաչատրյանի խոսքերով՝ ամենահետաքրքիր հնարանքը խոսքի փոխարինումն էր երաժշտությամբ, երբ երեւում էր հերոսի հուզված դեմքը, սակայն լսվում է ոչ թե նրա խոսքը, այլ՝ երաժշտությունը, որն արտահայտում է նրա հուզական վիճակն ու ապրումները: Ու բոլորը հասկանում են, թե ինչ էր ուզում ասել հերոսը: Հայ մեծանուն կոմպոզիտորը մասնակցում է նաեւ Ռոմի վերջին երեք ֆիլմին՝ «Գաղտնի առաքելություն», «Ծովակալ Ուշակով» եւ «Նավերը գրոհում են բաստիոնները»: Խաչատրյանի համար մեծ նշանակություն ուներ համագործակցությունը Վլադիմիր Պետրովի հետ՝ «Ստալինգրադի ճակատամարտը» կինոէպոպեայում՝ նկարահանված 1949 թվականին: Այս ֆիլմի համար գրված երաժշտությունը հիմք է դառնում համանուն համերգային սյուիտի ստեղծման համար՝ բաղկացած ութ համարից: 1955 թվականին էկրան է բարձրանում Սերգեյ Յուտկեւիչի «Օթելլոն»՝ ըստ Վիլյամ Շեքսպիրի համանուն ողբերգության: Արամ Խաչատրյանն այս ֆիլմում ստեղծում է մի քանի դրվագի համար երաժշտական ստեղծագործություններ, ինչպիսին Դեզդեմոնայի վոկալիզն է ու «Ուռենու երգը» կամ «Նախաբանը»՝ Օթելլոյի պատումը: Արամ Խաչատրյանը խոստովանել է, որ սիրում է թատրոնն ու կինոն, երբ գրում է երաժշտություն, ունենալով ձեռքի տակ հստակ դրամատուրգիական պլան՝ բխեցված պիեսից կամ ռեժիսորի մտահղացումից:

Վրաստանը վերադարձնել քաղաքակրթական խաչմերուկ

Վրաստանի նախագահ Միխայիլ Կավեաշվիլին կոչ է արել վրաց դիվանագետներին՝ առավելագույնս նպաստել երկրի խաղաղ ու տնտեսական ինտեգրմանն ավելի խոշոր աշխարհագրական տարածքային միավորներին: Այս մասին նա խոսել է Թբիլիսիում կայացած վրացական դիվանագիտական կորպուսի տարեկան ամփոփիչ հավաքի ժամանակ: Նա հորդորել է վրաց դիվանագետներին՝ շարունակել ջանքեր ներդնել՝ առեւտրային ու տարանցիկ կապերի զարգացման համար: «Մեր ընդհանուր նպատակը Վրաստանի կարգավիճակի հետակա ամրապնդումն է՝ որպես Հարավային Կովկասում ռեգիոնալ կենտրոնի: Միաժամանակ մենք պետք է առավելագույնս նպաստենք, որպեսզի մեր երկիրը ներգրավվի խաղաղ ու տնտեսական միավորումներում, որոնք ընդգրկում են ավելի մեծ աշխարհագրական տարածքներ՝ Ասիա, Եվրոպա եւ Մերձավոր Արեւելք: Կոչ եմ անում, որ ձեզնից յուրաքանչյուրը ջանքեր գործադրի՝ տարանցիկ ու առեւտրային կապերի հետագա խորացման համար: Դա կնպաստի ոչ միայն գլոբալ կապերի հետագա խորացմանը, այլ նաեւ Վրաստանին կվերադարձնի պատմական, քաղաքակրթական խաչմերուկ»,- ասել է Վրաստանի նախագահը: Նա նաեւ ասել է, որ Վրաստանը «Միջին միջանցքի» առանցքային հանգույցներից է:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 23.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԲԱՔՎՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆՈՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ Է ՄԱՏՈՒՑՎԵԼ

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Մինչ Հայաստանում իշխանությունները նախանձելի եռանդով շարունակում են հակաեկեղեցական արշավը, Ադրբեջանում տեղի է ունենում ճիշտ հակառակ երեւույթը: Ադրբեջանի իշխանությունները փորձում են ամեն կերպ հաճոյանալ քրիստոնյա աշխարհին, դիրքավորվել որպես մուլտիկուլտուրալիզմի եւ մուլտիկրոնականության խաղաղ գոյակցության երկիր, որտեղ հանդուրժողականություն կա անգամ օտար կրոնների հանդեպ: Փորձում են քաղաքակիրթ դեմքով ներկայանալ աշխարհին եւ մաքրվել բարբարոսի իմիջից: Իսկ առաջին քրիստոնեական երկրի՝ Հայաստանի իշխանությունները ապշեցրել են ողջ աշխարհը՝ սեփական եկեղեցու դեմ բարբարոսական ու խելագար այս արշավով:

Ընդ որում, Ադրբեջանը ոչ միայն Բաքու-Վատիկան հարաբերություններն է սերտացնում, այլ նաեւ Բաքվի ու Ռուս ուղղափառ եկեղեցու միջեւ հարաբերությունների բարելավմամբ է զբաղվում ու, ինչը շատ ուշագրավ է, միջեկեղեցական հարաբերությունների բարելավումը չի դադարել նույնիսկ այն ժամանակ, երբ Մոսկվայի ու Բաքվի միջեւ քաղաքական հարաբերություններում զգալի սառնություն ու լարվածություն էր առաջացել, եւ երկուստեք դեմարշներ էին արձանագրում: Փորձենք ավելի մանրամասն ներկայացնել, թե ինչի մասին է խոսքը:

Օրերս Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի Սբ Յուղաբեր կանանց ուղղափառ քրիստոնեական տաճարում առաջին անգամ Սբ պատարագը հնչել է ադրբեջաներեն: Այս մասին տեղեկացնում է Ռուս ուղղափառ եկեղեցու Բաքվի եւ ադրբեջանական թեմի մամուլի ծառայությունը: Համաձայն հաղորդագրության, Սբ պատարագի եւ աղոթքների տեքստերի ադրբեջաներենով թարգմանությունը սկսվել է իրականացվել դեռեւս 22 թվականին՝ Բաքվի Ռուս ուղղափառ եկեղեցու թեմի ժամանակավոր կառավարիչ՝ Պյատիգորսկի եւ Չերկասկի արքեպիսկոպոս Ֆեոֆիլակտի արտոնությամբ: Թարգմանությունն իրականացվել է հատուկ աշխատանքային խմբի կողմից, որը ղեկավարել է վարդապետ Ալեքսի Նիկոնորովը: Թարգմանական հիմնական աշխատանքներն իրականացրել են Ալի Ասլանլին ու Թորալ Ագաեւը: Անցյալ տարվա մարտին էլ լույս է տեսել ադրբեջաներեն թարգմանված ուղղափառ աղոթագիրքը: Թարգմանական աշխատանքները շարունակվել են, նաեւ թարգմանվել են Մկրտության, Դրոշմի խորհրդակատարությունների տեքստերը, հուղարկավորության կարգը եւ այլ ծիսակատարությունների տեքստեր:

Այս տարվա մարտին Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի՝ Բաքու կատարած այցի ժամանակ թարգմանական աշխատանքները ներկայացվել են վերջինիս եւ արժանացել պատրիարքի բարձր գնահատականին: Թարգմանված տեքստերը ռուսական ուղղափառ եկեղեցական երաժշտությանը հարմարեցրել է Ստավրոպոլի Վլադիմիրյան տաճարի երգչախմբի ռեգենտ Էմիլ Միրզոեւը: Պատարագն էլ մատուցել է Բաքվի Սբ Յուղաբեր կանանց տաճարի ավագերեց Դիոնիսի Սվեչնիկովը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am